

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԵԱՆ *)

Արովեանը իւր ուսման ամբողջ ընթացքում մի մասնագիտութիւն չընտրեց, այլ ինչով հետաքրքրուում էր, նրանով էլ զբաղւում էր: Նա միշտ աչքի տակ ունէր իւր ապագան, հայրենի երկրի բազմագիւմի կարիքները, ուստի և աշխատում էր այն առարկան լսել, ինչ որ աւելի շատ պէտք պիտի դարձայ աստան աշխարհում: ¹⁾

Բարբոտը իւր բարեկամին միշտ տանում էր իւր հետ հարսանիքներին, պարահանդէսներին և խնջոյքներին:

Հայրենիքի հետ նա իր կապը չէր պահպանում միայն ընտանիքից ստացած նամակներով, այլ նամակագրութիւն ունէր նաև նշանաւոր և աչքի ընկնող հայերի հետ: Ի միջի այլոց Թըղթակցում էր և Մսեր մագիստրոսի հետ, որ իւր կողմից ծանօթացնում էր Արովեանցին իր բարեկամներին հետ: ²⁾

Հանգուցեալ մագիստրոսը ապրելով մի կետրոնական քաղաքում միջնորդ է լինում Արովեանի և նրա ընտանիքի միջև և և բոլոր նամակներն ինքն էր հասցնում Քանաքեռ:

*) Տես «Լուսմայ» Ա. տ. գիրք Բ.

¹⁾ Ըստ Վար. Արովեանի լսել է էնցիկլօպեդիա ինչպէս և ինքը (նոյն համալսարանում):

²⁾ Առ Յովհաննէս վարդ. Շահխաթունեանց յեջմիածին

Տփիսիս ի 20 յուլիսի 31 ամի.

Շնորհաշուք Յովհաննէս վարդ. Շահխաթունեանց Շահրիարցի՝ հոգեգործով հայր իմ: Յառաջնում փօշտի առաքեցի առ ձեզ զթուղթ մի գրեալ ի Խաչատուր դպրէ Արովեանց, զոր՝ յուսամ թէ չէք ձանձրացեալ ի հասուցանել առ ընտանիս նորա ի Քանաքեռ. այժմ կամ է ինձ փոքու իւրք ծանօթացուցանել զհանգամանաց որպիսութեան նորա:

Այս այն դպիրն է, այն Խաչատուրն է, որ արտասուալիճ աչօք մեկնեցաւ յԱթոռոյ այտի և ի մէնջ արկեալ զանձն իւր ի պանդխտութիւն ի սէր Հայրենեաց՝ չուեաց եհաս մինչև ի Դերպտ քաղաք. ուր ըստ զարմանալի յառաջադիմութեան իւրոյ (որպէս գրէ ինքն) ի խուն միջոցի գորղացեալ է ոչ զլեզու գերմանացւոց միայն, այլ և զարհեստս նոցա զայլ և այլս, զորս չէ տեղւոյս թուել, մինչև ուղիղ և անվրէպ թարգմանութեամբ յեղով գրեթեռաւծս ինչ ի լեզուէ անտի ի Հայ, և անդարարձօրէն զորս աչօք իսկ իմովք տեսանեմք և ընթեռնում: Յամօթ եղիցին որք վշտացուցին զչքմեղ պատանին՝ զվառեալն ի սէր ուսման և օգտին հայրենեաց՝ զլցեալն ձրիւք շնորհաց, որ արժէր ապաքէն զհարիւր ալոոր: Նա զարգանայ օր ըստ օրէ ի շնորհս իւր և բարձրանայ ի պատիւ և ի փառս հայրենեաց ի մէջ օտար ազանց՝ ընդ իւր բարձրացուցանելով զազգ մեր և

Արդուհանր այցելութեան ժամանակ մի անգամ իւր ուսուցիչ Խնդկհարդի մօտ պատահում է իւր բարեբարին: Շատ քաղցր խօսակցութիւններից յետոյ բարեբարը պատմում է իւր սանի կիսադուռը (գլօբուս) շինելու յաջողութեան մասին: Թէև Բարբօտը նրա ընդունակութիւններն ուրախութեամբ յիշատակում է, սակայն և չէ մոռանում զգանհմտութիւն ձեռին իմոյ ի ձեռագործութեան: ¹⁾

Բոլոր պրօֆէսորներն իրենց մօտ սիրով ընդունում էին, դասեր էին տալիս իւրաքանչիւրը մի առարկայից: Բայց դաս տալուց անմիջապէս յետոյ բաց չէին թողնում, հիւրասիրում էին պանդուխտ հային և այդ հիւրասիրութեան միջոցին ըստ չէին անցկացնում առանց մի բան սովորեցնելու: Ֆրիդլենդերը սեղանի ժամանակ խրատում էր երիտասարդին՝ յիշել երկայնամիտ, հեզ, մի փոքրոգի և երկչոտ, առ պրօֆ. միշտ համարձակ զնալ և խօսել, մի լինել ամաչկոտ, միշտ ընթերցում գԱստուածաշուկ: Ի նմա պարունակին ամենայն առաքելութիւն... ²⁾

Որքան գեղեցիկ է այս խրատն, այնքան աւելի գեղեցիկ են Բարբօտի խրատները, նորա բարսյական դասախօսութիւնները: ամեն անգամ իւր տանն ընդունելիս, դէպքից օգուտ էր քաղում նա բարի մտքեր ներշնչել իւր սանի հոգու խորքերը, զգուշացնում էր նրան հեռու կենալ վատ և կեղծ մարդկանցից, միայն յարաբերութիւն ունենալ նրանց հետ որ վիցին նի) մանաւանդ այնպիսիք, յորոց ոչինչ գայթակղութիւն մտցէ ի ձեզ, խափանել զձեզ հաւատոյ ձերմէ, ես կասկածեմ թէ գտանին այնպիսի անձինք, որք օտարաց քաղցր թուին, այլ այսու ամենայնիւ թիւրեաւ պատրի ոք և առանց գիտելոյ տկարանայ ի հաւատոց իւրոց, այլ ես զայս ոչ կամիմ վասն ձեր: ձեր հաւաքին պարծանք եղիցին հաւատարմութիւն ձեր ի կրօնս Ձեր, զի ամենայն քրիստոնեայք մի են ի Քրիստոս, եթէ հայք, և եթէ գերմանացիք և եթէ կաթողիկէ միայն թէ

զանուն: Իսկ դոքա խորովածակերքդ չգիտեմ զինչ յաւելին կամ զինչ յաւելցուն յեկեղեցի մեր: Բայց թէ զանուն վատութեան թողեալ յաշխարհի, կացուցին՝ որպէս և հասցուցեալ են արդէն զազգ մեր և զԱթոռ յառակ նշաւակի ամենայն աշխարհի: Փարոս 76 № 5.

¹⁾ Արդեօք այս ինչ ձեռագործ է, որի մէջ հմուտ չէ Արդուհան. եթէ ընդունելու լինինք ներկայ նշանակութեամբ՝ ուրեմն պիտի ասենք, որ նա սովորել է և ձեռագործութիւն. այն ամենն—ինչ որ սէտք կը գար հայրենիքում—ցանկանում է սովորել որպէս զի սովորցնէ ուրիշներին: Սակայն յետոյ ոչ մի կերպով ցոյց չի տալիս, որ նա ձեռագործ գիտէ: Ուստի հաւանական է ենթադրել, որ խօսքը վերաբերում է նրա ձեռքի անհմտութեան:

գործովք իւրեանց եղիցին արդար որ օր դուք տկարասցիք ի հաւատոց և յօրինաց ձերոց, զայն օր խզէք դուք զկապ իմ ի մէջ ձեր և իմ զայն օր ոչ ևս կամեցայց տեսանել զձեզդ.....

Որքան հիանալի են այս խօսքերն և մարդ չպէտք է զարմանայ, երբ այդ լսում է մի գիտնականից, քանի որ ասողը ճշմարիտ քրիստոնեայ է, մարդասէր և հեռատես: Նա ցանկանում է հայ ազգի բարօրութիւնը, նա գիտէ որ առանց կրօնի հայ ազգն ընկնում է, առանց այդ սրբազան կապի նա կ'զլորուի անդունդի խորքը... սակայն և որքան ուրախալի է լինում երբ այս խօսքերի արձագանքը Արուկեանից ենք լսում. «Նա զամենայն կեանս իմ զոհեմ վասն կրօնի իմոյ, և ոչ ոք կարէ խարբալել զիս»: Ֆրիդլենդերը նկատելով նորա վարժուելը թուարանութեան մէջ՝ սկսում է պարապել և երկրաչափութեամբ, որի մէջ անհամեմատ բարձր ընդունակութիւն է ցոյց տալիս:

Մեծ յաջողութիւն է ցոյց տուել նաև գերմաներէն լեզուի ուսման մէջ, այդ մասին զարմացմամբ վկայում են թէ պրոֆեսսորները և թէ նրա մօտիկ ծանօթները. նրա գերմաներէն գրութիւնները 31 թուականից, որ մինչև այժմ մնում են, ապացոյց են այդ բանին:

Ընդհանուր պատմութիւնից նորադոյն դարը զրոյցի ձևով են անցնում և հարիւրաւոր բացատրութիւններ տալիս: Նա գիտէ ժամանակի նշանակութիւնը և մի ժամ աւելորդ չի վատնում:

Իւր կարգացած գրքերից լաւ կտորները միշտ քաղում էր, կարգացած լրագրից պէտքեկան մասերը միշտ հանում էր և թարգմանում հայերէն. օրինակ նա քաղել է ի թիւս այլոց և զգրոյց մեծիմաստ թագաւորին Շվեդիոյ Կարլի Յոլմոնսնու 1825 Ստորում ի թուղթս գրականութեան՝ վերնագրով մի գեղեցիկ յօդուած, որ սկսւում է այս խօսքերով. «Առանց կրօնի բարոյականութիւն չէ հաստատուն գաւազան ինչ՝ առ ի անվտանգ անցանել ընդ դիւրասայթաք շաւիղս կենաց»:

Արուկեանը մի անգամ փող է կորցնում. կորուստը թէև չնչին, սակայն շատ է տխրեցնում նորան. այս մասին նա չի ուզում յայտնել իւր բարեբարին, բայց երկար տատանուելուց յետոյ վերջապէս յայտնում է: Բարբօտը այդ լսում է խոժոռ դէմքով, որով ուզում է ցոյց տալ, թէ պէտք է զգոյշ կենալ:

Իւր պարկեշտ ընտելութեամբ Արուկեանը սիրելի էր ոչ միայն ուսուցչապետներին, այլ և ուսանողներին, ուստի, եթէ մէկը որ և իցէ ուրախութիւն ունէր՝ կանչում էր և Արուկեանին, մինչև անգամ դժտորութեան քննութիւն տալու ժամանակ էլ կանչում էին նորան (Աբ. դէպքից օգուտ քաղելով նրա կարագրում է նրանց քննութեան ձևը):

Գրականութիւնը խիստ զբաղեցնում էր նորան, ժամանակակից հանճարների արտագրութիւնները միշտ կարդում է

և շատ անգամ թարգմանում կտորներ իւր յիշատակարանում¹⁾։ Զբաղւում է Շիլլէրի և Գեթէի գրածներով և նոցա նամակներով։ Թէև Աբովեանը իւր նամակները և յիշողութիւնները գրաբար է գրում, սակայն աշխարհաբարի մասին վաղուց է մտածել, այդ միտքը մտցրել էր նրա մէջ իւր պրոֆէսորներինց մէկը—Վալտերը, խօսելով աշխարհաբար Աստուածաշնչի կարևորութեան և նշանակութեան մասին, Այդ օրուանից պէտք է համարել նորա մտածողութեան սկիզբը։

Ուսանողական ժողովները, համալսարանի պարգևաբաշխութիւնները, ուսուցչապետների սիրով և թևանցով խօսելը ուսանողներին հետ գրաւում էին հայ երիտասարդին, սակայն միւս կողմից, ինչպէս ինքն է ասում Հիտենանելիմ զայս ամենայն սիրտ իմ անկանի յանձնովն խռովութեան ի մտածել թէ յո՞ր աստիճանի տգիտութեան գտանին ազգ մեր և թէ եկեցե՞լ ժամանակ զի և ազգ մեր այսպէս պայծառասցին։ Զերմ կերպով հետեւելով իւր ուսման և պատրաստուելով իւրաքանչիւր առարկայից առանձին նա համարուեցաւ իսկական ուսանող, ուստի և ենթարկւում էր իւրաքանչիւր սեմեստրի քննութեան։

Նա իւր բոլոր զբաղմունքների ժամանակ միշտ մտածում է իւր ապագայի մասին, քննութիւնների ժամանակ անգամ իւր գործունէութեան մասին էր խորհում։ Մտքի այդ տեսակ լաբումից մի անգամ գիշերը երազում տեսնում է իրան Հայաստանի մի հայ եկեղեցում կանգնած հասարակութեան քարոզչիւս. այդ բոպէին յանկարծ երևում է իւր բարերարը. նա պատկառում է և լռում, իսկ Բարրոտը խրախուսում է ասելով. «Ուսուցէք զմանկունս Հայոց, ուսուցէք ընդէր լռէք»։ Այս էլ դառնում է նորա նշանաբանը։

Աբովեանի անունը տարածուած էր ամբողջ քաղաքում. համալսարանի հետ կապ ունեցողները լսել էին նրա մասին։ Նրա հայ լինելը բոլորին հետաքրքրելի էր։ Սրբ մի անգամ մի հիւանդ չէրքէզ էին բերել քաղաքային հիւանդանոցը, բժիշկը չհասկանալով նրա լեզուն գալիս խնդրում է Աբովեանին գնալ իրեն հետ հիւանդանոց, գուցէ հասկանայ նրա լեզուն։ «Սիրտ իմ լցաւ խնդութեամբ, գրում է Աբովեանը, ամենայն երակք իմ խաղային ջերմ արիւնք ի լսել իմ գանուն աշխատակցիս,

¹⁾ Շատերից մէկը. «Բարեկամութիւն կարէ միմիայն կիրառութեամբ ծնուել, կիրառութեամբ առնէ գհաստատութիւն։ Սև նոյն իսկ սէրն հակումն և այլ ամենայն ոչինչ օգնեն բարեկամութեան, ճշմարիտ գործունեայ և արդիւնաւոր բարեկամութիւն կայանայ յայնմ, զի մեք համակամ եղիցուք ի կեանս մեր, յօժարաւիոյթ լիցուք ի լցուցանել զգիտաւորութիւն իրերաց և անանջատ այնպէս շաղկապեցուք ընդ միմեանս, որպէս պահանջէ միութիւն դատման և կենաց մերոց»։

ախ զիւրդ քաղցը է հայրենակիցն, զիւրդ աշխարհակիցն, յայսմ չգտանէ դանազանութիւն պտնդուխտն ի հայրենեաց, եթէ մահմտական իցէ եթէ քրիստոնեայ, միմիայն զի իցէ աշխարհակից: Խնդութեամբ թողեալ զամենայն գործս իմ զգեցայ և ելի ընդ նմա արտաքս¹:

Արովեանը մտաւ հիւանդանոց և զարմացմամբ տեսաւ իւր աշակերտին անկողնում պարկած. նա կանգնեց անկողնի մօտ և այն բոսկին նրա միտքը սլանում է հազար ու մի դաշտերի, լեռների վրայով դէպի իւր Հայրենիքը՝ որտեղ կանաչի մէջ թաղուած է Սրբազան երկիրը, Էջմիածինը, Գեղարդը և Քանաքեռը. ուստի և նա կանգնած տեղը արցունքներ է գլորում: Չերքեզի հայեացքը նրա սրտից հառաչանքներ է խլում:

Հայրենի երկրի թշուառ վիճակը, տգիտութիւնը ոչ միայն ինքն էր յիշում այլ և յիշեցնում էին նորան իւր ուսուցիչները. «Մեծ մաթեմատիկոս» Բուրգերը խօսելով Ամերիկայի կենցաղավարութեան մասին նրանց ազատ նիստ ու կացի, ազատ հոգու մասին ասելացնում է պազատութենէ յառաջանան ամենայն բարիք, գիտեմ զի աստիճանաւորք ռուսաց ի կողմանս ձեր ցուցանեն զբազում անկարգութիւնս, յայսմ չիք ինչ հնար բայց եթէ զարթուցանել զհոգի ազգին, իւրաքանչիւր ազգ պարտի ինքնին զգալ զբարի իւր և յառաջ տանել, ազգ ձեր են ազգ քաջաջանք, այլ միմիայն պարտ է արիացուցանել զնոսա (վասն հայրենի ազատութեան իւրեանց) բայց յայսմ պարտ է ուսումն և ոչ այնպիսի ուսումն ի ծայրագոյն աստիճանի այլ միմիայն այնպիսի ուսումն՝ որով զառաջին կարասցեն նոքա փոքր ինչ ծանօթեալ ընդ աշխարհի, ապա ինքնին հետևեացէ.....»¹)

Քրիստոսի ծննդեան օրը Արովեանն ըստ սովորութեան այցելութիւններ արաւ, նա իւր տեսութիւնները սկսեց ոչ թէ հասարակ հազուատով այլ հոգևորականի: Շատերից այդ օրը նուէրներ ստացաւ, Փրիդենբերգը ընծայում է «1. մեծագիր գիրք մի երկրագիտութեան. 2. տախտակ մի պատմութեան.

¹) Արովեանը իւր յիշատակարանները գրելով ի նկատի է ունեցել, որ անպատճառ ընթերցող պիտի ունենայ, ուստի և երբեմն ասում է «սիրելի ընթերցող»: Միթէ նա կարող էր երևակայել, որ 63 տարուց յետոյ միմիայն իւր տետրակների ծայր պէտք է բացուի: Երբեմն ասելի գեղեցիկ և խիստ է դիմում «տես քաղցը հայրենակից իմ, զիւրդ պարտ է վարել, թէ զիւրդ սիրեն քաղցրաբարոյ գերմանացիք զօտարականս, ոչ զանազանեալ բնաւ արք և կանայք, կարծեմ թէ մեզ պատահէր այլ մի տգէտ, որպէս ես և ազգն մեր լինէր ի տեղի այսոցիկ յուսաւորեալ գերմանացւոց, յայնժամ ոչ միայն ոչ թողոյր խառնել զնա ընդ իւր այլ նաև առակ նշուակի առնէ զնա»:

3. պատկեր Դերպտի. 4. փողպատ մի խաս և աման մի քաղցրաւենիք: Սրա հետ գերմանացին չի մոռանում և մի հաճոյախօսութիւն զարդարել լիցի պարզ և սակաւամասնեայ մանկանց Հայաստանի, զոր սիրէ սիրտ ձեր: Բարբոտը նոյնպէս նուէրներ է տալիս, որ ըստ որակի շատ բարձր էր առաջիններէց: Նա ընծայում է մի դանակ և այս ոտանաւորը ընչ փառք և ոչ մեծութիւն պարզեն մարդոյ զհանգիստ, ճշմարիտ հանգիստն տայ մեզ առաքինութիւն և չափաւորութիւն: Բարբոտը նոյնպէս նուէրներ է տալիս, որ ըստ որակի շատ բարձր էր առաջիններէց: Նա ընծայում է մի դանակ և այս ոտանաւորը ընչ փառք և ոչ մեծութիւն պարզեն մարդոյ զհանգիստ, ճշմարիտ հանգիստն տայ մեզ առաքինութիւն և չափաւորութիւն: Բարբոտը նոյնպէս նուէրներ է տալիս, որ ըստ որակի շատ բարձր էր առաջիններէց: Նա ընծայում է մի դանակ և այս ոտանաւորը ընչ փառք և ոչ մեծութիւն պարզեն մարդոյ զհանգիստ, ճշմարիտ հանգիստն տայ մեզ առաքինութիւն և չափաւորութիւն:

Ուսուցչապետները տեսնելով նրան հոգևորականի զգեստով տւելի են ուրախանում, նոքա զիտէին որ մեզ մօտ այդ շորը պատուի նշան է: Ամեն տեղ քաղցր ընդունելութիւն, ամեն տեղ սիրալի խօսակցութիւն.—նա չէ թագցնում իւր ներքին տրամադրութիւնը և իւր զգացմունքները յայտնում է շատ վառ և պայծառ գոյներով. «այսպէս քաղցր են գերմանացիք, ս՛հ երանի թէ այսպէս քաղցրացին և ազգք մեզ և ես ոչ մեռայց, մինչև տեսից զայս...» «ոհ, չքնաղ գերմանացիք, ես հաւասարեսցի ձեզ...» «ս՛հ ազնիւ գերմանացիք, որ լեզու ոչ պարտական լիցի գովել զձեզ»:

Բոլոր այցելութիւններն այնպիսի տալաւորութիւն էին անում Արտիսանի վրայ, որ նա սքանչացած է մնում. խօսում են նրա հետ, գովում են նրա եռանդը, իրենց անկեղծ սէրն են յայտնում դէպի երկտասարդն և այնպիսի խօսքերով ու ձևերով—որտեղից բուրում է մարդասիրութիւն, «դիմարդ ոչ սիրել զձեզ, որ թողեալ զայնարհ ձեր աստ յօտարութեան այդպիսի նախանձու պարապիք ի մակացութ. վասն այնարհին ձերոյ: ՅԱստի մանկահասակ ոմն այդպէս ջանասէր՝ ցանկալի է ամենեցուն մեզ»։ Այսպէս էին վերաբերում շատերն և չբաւականանալով աւելացնում էին «Այլ թէ ոչ ի վաղիւն յերեկոյն եկեսցիք առ մեզ, ես ցաւեցայց յոյժ»։

Իւրաքանչիւրը մի քանի գեղեցիկ խօսքերով, հաճոյախօսութիւններով ուրախացնում էին նրան և երբեմն ապագայ գործունէութեան ծրագրով նախապատրաստում «Այո և ես հաւատամ, եթէ յետ վայելելոյ ձեր զայսպիսի քաղցր ընկերութիւն ընդ լուսաւորեալ անձանց՝ անձանց որք մանաւանդ սիրեն զձեզ, զրկել զլսողին յետ միջոցի, դժուարին եղիցի ձեզ յոյժ, այլ քանի՜ խնդութիւն ոչ եղիցի ձեզ ի միւս կողմանէ, ի տարածելն ձեր և ի մէջ ազգի ձերոյ, զայս համարիտ սիրակցութիւն, մինչ և նոքա դարձցին սիրել զձեզ և դուք զնոսա և որ օրհնութիւն ոչ եղիցի ոսկերաց ձերոց՝ այն ինչ գործք երախտեաց ձերոց փայլեսցին յազգս ձեր, սուրբ է այս մտածումն և սա միայն տայ յաղթանակ ի վերայ ամենայն հակադարձ չարչարանաց»։ Շատ մեծ տպաւորութիւն են անում նորա վերայ այս խօսքերը և նա սքանչացած բացականչում է «Ո՛վ սրբազան խորհուրդ,

ան լուիցէ դայա ազգն իմ և կատարեսցէ դայա յիրաւի այսպէս՝
Անցնում են տօները, հանդիսաւոր օրերը—Թողնելով նրա
Իրաի հեռաւոր անկիւններում անջնջելի սիրայ կոթողներ դէպի
իւր բարեկամները:

Նա բոլոր գլուարճութիւններէց յետոյ չէ մոռանում հե-
տեկու իւր ուսման, որի համար եկած էր և օտարութիւն էր
քաջում և աւելի եռանդով է կաշում գործին: Նա իր միտքն
հարստացնելով հանդերձ, միևնոյն ժամանակ Հայոց ազգի կող-
մից մի տեսակ ներկայացուցիչ էր հանդիսանում: Ընդհանուրի
մէջ երբ հարցը հայերին էր դալիս, ազատ համարձակ իւր սեպ-
հական դատողութիւններն է տալիս և չէր զլանում իր տեղե-
կութիւնները տալու: Արդիւեան պատմում էր ազգի անցեալից,
ներկայից, էջմիածնի մասին, կաթողիկոսների մասին: Հնագէտ-
ներն աւելի են հետաքրքրւում նրանով և Արդիւեանի միջոցով
նամակագրութիւն են անում Ներսէս եպիսկոպոս Աշտարակցու
և Միքայէլ վարդապետի հետ, որոնց հնագիտական ընկերու-
թեան անդամ են համարում և խնդրում եմ թղթակցել Արեւի-
քից, Հայաստանի անցեալ և ներկայ պատմութիւնից:

Բարբոտի խորհրդով նա այցելում է Դորպատի ճեմարա-
նի քննութիւններին և ներկայ լինելով՝ զարմանում է թէ
ինչպէս 14 տարեկան տղաք այնպէս գեղեցիկ պատրաստու-
թիւն ունին և կարող են ժամանակով ազատ մտնել համալսա-
րան: Այս դէպքը զարմացնելով հանդերձ վշտացնում է նրան—
թէ ինչո՞ւ ինքն այն հասակում ոչինչ չէ իմացել: Մինչդեռ ըն-
րանք այժմ պատրաստ են համալսարան մտնելու: Զգացուած
սրտով և տխուր դէմքով գնում է Արդիւեանը իր բարերարի մօտ:
Բարբոտը տեսնելով նրան վշտացած հարցնում է պատճառը.
Նա պատմում է. գիտնականը լսելով նրա խօսքերը—մխիթա-
րում է նրան և քաջալերում է ասելով՝ —քո սովորածը, քո ի-
մացածը մեզ համար աւելի մեծ նշանակութիւն ունին քան
նրանցը—որոնց դու լսել ես. քանի որ նրանք մինչև դպրոց
մտնելն իրանց ծնողներից են սովորում:

Նա չէ բաւականանում ճեմարան այցելելով, այլ սկսում
է գնալ և «Զեմեկարի» երաժշտութեան դասերին:

Արդիւեանը միայն չէր սովորում, այլ սովորեցնում էլ էր.
հայերէնով հետաքրքրուողների հետ—պարագում էր: Իւր «սի-
րելի»՝ Վեդեմանին կարճ ժամանակում հայերէն կարգալ գրե-
լու մէջ ընտելացնում է:

Որքան աշխատութեան ժամանակ խիստ էր աշխատում,
այնքան ուրախութիւնների ժամանակ գիտէր իրան ուրախ պա-
հել. խաղալով իրեն շատ վարժ էր ցոյց տալիս. մեծ հանդէս-
ներում երբեմն հայկական խաղեր էր սովորեցնում:

Բարեբարունհի՞ն Բարբոտը մի անգամ իւր մօտ գտնուած
տիկիներէի և օրիորդների հետ ֆանդ էր խաղում: Խնդրում
են և Արդիւեանին մասնակցել իրենց գլուարճութեան: Նա այն-

քան շուտ ըմբռնում է խաղը և այնքան ճարպիկ կերպով յառաջ տանում, որ Բարբոսը տուն գալուց կի՛նն անմիջապէս ուղարկութեամբ յայտնում է իրենց ճազնիւ բարեկամի՝ յաջողութեան մասին: Բարեբարը շատ զոհ է մնում, սակայն ցաւում է, որ ինքը ներկայ չէ եղել:

Ինչպէս խաղերին — նոյնպէս մասնակցել է և նրանց երգերին: (Սրինակ յիշում է „Ի մայիսի, ի մայիսի, ի չքնաղ աւուրս նորա պարտիմք զուարճանալ, գոլով հոգեղէն, զի այսպէս է ամեն ինչ“:

Շնորհիւ իւր ընդունակութիւնների և գերմանական լեզուին շուտ տիրապետելուն — ոչ միայն ամենքն ուղարկութեամբ են ընդունում նրան, այլ և զարմացմամբ յիշում են և միշտ համեմատում այն ռաների հետ, որոնք մանկութիւնից մեծանալով Դորպատում, այնուամենայնիւ չեն կարողանում ուղիղ խօսել նոյն իսկ համալսարանում ուսանող եղած ժամանակ: Մի լեհացի բոլորովին հիացած Արովեանի ընդունակութիւնների վրայ, ասում է. «մեք ամենայն պարտիմք ամաչել առաջի ձեր վասն այսպէս շուտով ուսանելոյ ձեր գերմաներէն»: Իսկ պրօֆէսսոր Լիդերուրգն — աւելի է բարձրացնում. «իմ տեսեալ է զանգլիացիս, զֆրանց, զուսս և զայլ զանազան ազգ Սերոպիոյ, որ ի մանկութենէ ուսանեն զլեզու մեր, այլ ինձ չիք ուրեք պատահեալ այնպիսի օտարազգի ոք այնպէս յստակ և մաքուր արտասանել և խօսել ի մեր լեզու, որպէս դուք յայդմ մեծացեալ հասակի ձերոյ: Սյա ապացուցանէ ոչ միայն զյարմարութիւն լեզուին, այլ և զյարմարութիւն եւ զառանձին ընդունակութիւն և զընաձրութիւն ազգին»: Սյայէս Արովեանը մեծ հմտութիւն է ձեռք բերում և լատերապետում, մաքուր և «յստակ» խօսում է որի համար և մի ուրիշն աւելի զարմացած ասում է «Ձեն այս զարմանք լեզու մի այնպէս ուսանել մինչև դժուարին է որոշել զլեզու նորա ի գերմ.»:

«Ազնիւ բարեկամ, սիրելի բարեկամ, սիրելի Հայկազն» խօսքերով էին դիմում նրան:

Արովեան միշտ լինում էր իւր ուսուցչապետների, բարեկամների մօտ: Դորպատում մեծ քաղաքացիութիւն էր վայելում, «րեկտօրներն» անգամ մի առանձին զուարճութիւն էին զգում ընդունել նրան իրենց յարկի տակ և կամ անձամբ գնալ Արովեանի մօտ: Քանի որ փոխադարձ այցելութիւններ լինում էր ուստի և հարկաւոր էր նրան պատշաճաւոր բնակարան: Նա սկզբում վճարում էր տան վարձ 180 ռուբլի, բայց թանգութիւնը ստիպում է թողնել այդ բնակարանը և վարձել ուրիշը երեք սենեակից բաղկացած 110 ռ.— աւելի լաւ, յարմար կահ կարասիներով, պատկերներով, ծաղկամաններով զարդարած: Սակայն որտեղից հեռանում է, հեռանում էր սիրով, քաղցրութեամբ և համբոյրներով և ամենագեղեցիկ տպաւորութիւնների սփռելով: Ում հետ ընկեր է եղել, եղել է հաւատարիմ, կապուել

է նրանց հետ բարեկամական կապերով, սիրոյ ամրակուռ շրջ-
թաներով: Եթէ դէպքը բերել է բաժանուել իւր ընկերից, ի-
րեն հետ ապրող ընկերը թողել է ամենայնաբարձրի պատճառնե-
րով Արուիւանին (օրինակ ընկերի եղբայրը Սարատովից դալիս
է որ միասին ապրին): Նրանք բաժանուելով հանդերձ ուխտում
են լինել միշտ միմեանց բարեկամ և ընկեր:

Գերմանուհի օրիորդներից ոմանք երբեմն խիստ ազդու
էին Արուիւանի վրայ, սիրոյ զգացմունք էին զարթեցնում: Սկզ-
բում Օլգան դրաւեց, ապա շատերն,—որոնց մէջ ամենից մեծ
տեղ բռնում է Բարբոտի «մատաղ զոքանչը» (երկի քենին)
Յուլիան: օրիորդի հետ շատ անգամ արկածալից խօսակցու-
թիւններ է ունեցել:

Մենդեան տօներին յաջորդում է նոր տարին: Այդ օրը նա
կրկին այցելութիւններ պիտի անէր: Բարբոտի մօտ գնալիս,
տեսնում է որ սենեակում չէ իւր սիրելի Յուլիան: Արուիւանն
սկզբում քաշում է, բայց յետոյ բոլոր ոյժը հաւաքելով խնդ-
րում է բարեբարին ներկայացնել օրիորդին: Բարբոտը անմի-
ջապէս կատարում է իւր բարեկամի խնդիրը. «և ահա եղանէ
աղաւնակերպ օրիորդն սպիտակազգեստեալ իբրև զձին, համես-
տափայլ ժպիտ ճառագայթէին ի շրթանց և ի դիմաց նորա,
նա մատեալ առ իս և ես առ նա ի ներկայութեան բարեբա-
րին իմոյ (այստեղ երկու բառ թանաքով սևացրած է) ցանկամբ
միմեանց զյաջորդութիւն առ նոր տարի, և երանի թէ յամենայն
ժամ հնչէին յականջ իմ այս մեղրահամ բանք նորա»:

Բարբոտը և իր ազնիւ ամուսինն այսքան մօտիկ յարաբե-
րութիւն հաստատելով Արուիւանի և Յուլիայի մէջ՝ ցանկութիւն
են ունեցել պանդխտի յառաջադիմութիւնն քաղաքավարա-
կան ձևերում կամ ինչպէս ինքն է ասում. «զի առաւել մերձա-
ւոր գոյով քաղցր օրիորդին մեղմասցին բիրտ բարք իմ և յիրա-
ւի այս միայն է միջոց, զի թէ ղը կամի մեղմացուցանել զօտրս,
որքան մերձենայ նա ծանօթութեամբ և բարեկամութեամբ ընդ
կանացի՝ սեռից, այնքան կրթին, պատուականանան բարք նորա»:

Այդ օրը Բարբոտ իւր կնոջ կողմից խնդրում է որ բացի
չորեքշաբթի և ուրբաթ ¹⁾ օրերից կիւրակի օրերն էլ իրենց
մօտ ճաչէ. թէև երիտասարդը շատ է աղաչում, որ իր պատ-
ճառով նեղութիւն չքաշեն, սակայն բարեբարը նկատում է որ
դա իրենց համար մի առանձին զուարճութիւն է:

Միւս պրօֆէսորները և բարեկամները նոյն քաղցրու-
թեամբ են ընդունում: Փրիդլենդերը իր «սիրելի բէյա»-ին շատ
լաւ է վերաբերում: (Ինքը և ամուսինը Արուիւանին «բէյա»

¹⁾ Այդ օրերը Արուիւանի համար պատուայ կերակուր էին
պատրաստում: Հիւսիսի կեանքը—Դորդատը չեն զրկել նրան
ազգային աւանդութիւններից:

էին անուանում, որովհետեւ իրենց մանուկ Ջօրջին միանգամից այդպէս է կոչել)։

Արտվեանն այցելութիւններ ի միջոցին ծանօթանում է շատ տիկիներին և օրիորդներին հետ, որոնք նրա հետ շատ լաւ յարաբերութեան մէջ են մտնում, խօսում, ասում, հարց ու փորձ են անում Հայաստանի, նորա ներկայ քաղաքական և հասարակական կացութեան մասին։ Արտվեանն իւր անչափ եռանդով և բուռն ազգասիրութեամբ խիստ դիւր է գալիս շատերին ուստի և ֆրիգլենդերի մօտ մի օրիորդ հրապուրուած ասում է «Ընտրեցէք զպատուական աղջիկ մի ի մէջ և տարէք ընդ ձեզ ի Հայաստան, այս յոյժ բարւոք լինի ձեզ»։

Այս խօսքերն Արտվեանի մէջ խորը արձագանք է տալիս. նրա միտքը—այնուհետեւ դրադուում է այդ խնդրով մինչև Թիֆլիսում օր. Էմիլիային ծանօթանալը։ Արտվեան խիստ զգացւում է և խոստովանում է. «զիմորդ ցանկայր սիրտ իմ, ունել յերաւի զսիրելի ամուսին մի գերմ. որ նոյնպէս օրինակ լինի իւր ամուսնական կենցաղավարութեամբ աշխարհաց մերոց, այսօր ճշ օրհաս դառնազին՝ ես ոչ մնամ վասն այսր բախտաւորութեան, զի քաղցր ձեռք գերմ. աղջկան միոյ ջերմացուցանէ զձեռն իմ, որոց ամուսնութիւն և կեանք սէր են միանգամայն. օրհաս ծանրագին, այլ որպիսի ծանրութիւն, որպիսի դժուարութիւն ոչ պարտի ընդունել և կրել, որ անձնանուէր լինի հայրենեաց, այս վասն հայրենեաց պարտէ լուծանել զայս կապ ջերմագին»։

Պատահում էր երբեմն, որ Բարբօտը և ոմանք միւս պրօֆէսորներից հայոց պատմութեան և գրականութեան մասին զանազան տեղեկութիւններ են հարցնում. ինչպէս մի անգամ Ագաթանգեղոսի անուան ծագման մասին։ Ուսումնասէր գերմանացիք աչքից չէին փախցնում և հայոց գրականութիւնը, զգում են նրա ճոխութիւնը, հարստութիւնը և յոյն գրականութեան լրացուցիչ և ստուգիչ մաս լինելը. որ և կրկնում են Արտվեանին։ Բարբօտը մինչև անգամ Հայոց հին գրականութեան աղբիւրներին, մատենագիրներին աւելի մեծ հաւատ էր ընծայում—քան յունականին։ Նա ծանօթ էր հայոց կրօնական երկպառակութիւններին, Մխիթար աբբային և այլոց. ուստի և միշտ զգուշացնում էր Արտվեանին հեռու կենալ նրանց շաւղից. թէև գովում է նրանց եռանդը, սակայն պախարակում է նրանց բռնած դիրքը դէպի հայ եկեղեցին. Բարբօտն այնքան ատում էր հայոց կրօնական երկպառակութիւնը, որ մի անգամ աւելի խիստ զգուշացրեց. «չլինի թէ այդպիսի մի յանդուգն սխալ քայլ անես, այն ժամանակ աչքս ձեզ չտեսնէ»։ Արտվեանը շատ տխրում է այս խօսքի վրայ, որ իր բարեբարը քիչ հաւատ ունի դէպի իւր հաւատը և կրօնը, որին և սպասաւոր է։

Իւրաքանչիւր բոպէն նրա համար նոր բան է բերում.

իւրաքանչիւր մի գեղեցիկ դէպք նրան դաստիարակում է: Մի անգամ իւր տանտիկնոջ սխալմամբ աւելի է փող տալիս. առան տիկինը գերմանուհու յատուկ ազնւութեամբ վերցնում է միայն իրեն հասանելի մասը և մնացած 75 ռուբլին պարձնում իրեն, որպէս զի Արտիւեանը Բարրօտին յանձնէ: Բարեւարը սխալմամբ ծրարում 75 ռ. աւելի էր դրել ¹⁾: Սրիտասարդի գարմանքն անչափ է լինում և ցանկանում է, որ իրեն հայրենակիցներն էլ նոյն ազնւութիւնն ունենան և ասում է. «ազնւութիւնն է գըլխաւորագոյն առաքինութեանց»:

Բարրօտը իւր վերայ առած լինելով նրա ուսման և կրթութեան գործը՝ խորհուրդ է տալիս կիթառի վերայ ածել սովորել և խոստանում է միւս օրն անպատճառ գործիք առնել: Արտիւեանը հրաժարւում է՝ պատճառ բերելով համբերութիւն չունենալը, սակայն բարեբարն աւելացնում է—որ հէնց դրա համար էլ պիտի սովորես—համբերութիւն ձեռք կը բերես: Հնազանդւում է Խաչատուրը:

Բարրօտը կամ ուրիշ պրոֆէսորներ հրաւիրում էին Արտիւեանին իրենց հաշուով գնալ ներկայացումների, պարահանդէսների և ցիրկերի: Շատ անգամ երկուսը միասին էին խնդրում և նա շփոթւում էր—արդեօք ո՞րի առաջարկն ընդունէ: Նորան հիւրասիրում էին ոչ միայն ուսուցչապետները կամ բարեկամները, այլ և այն տանտէրերը—որտեղ ապրել էր: Տիկին Էջնոյց խնդրում է, որ իւրաքանչիւր չաքաթ օր իրենց մօտ ճաշէ. և թէև նա հրաժարւում է նեղութիւն չպատճառելու համար, սակայն վերջապէս նրա անկեղծ թախանձանքներին ստիպուած է լինում զիջանել:

Իր բարոյական կենցաղավարութեամբ նա յայտնի էր ամեն տեղ: Գերմանական բոլոր գեղեցիկ սովորութիւններն իւրացրել էր. (ոչ մի անգամ չէ յիշում թէ նրանց մէջ թղթախաղ կայ): Մի օր ընկնելով ուռւ չրջանի մէջ՝ խնդրում են թուղթ խաղալ: Արտիւեանը բացէ իրաց մերժում է՝ առարկելով որ ինքն անտեղեակ է:

Իւր այցելութիւններն ամեն տեղ սիրով ընդունուելով, շատերն իրենց բարեկամութիւնը ցոյց տալու և նրան ուրախացնելու համար անձամբ գալիս են նրա մօտ: Մեծ ուրախութիւն է զգում, երբ տեսնում է իւր համեստ յարկի տակ պրոֆէսորներին և նրանց կանանց: Նա շատ երջանիկ էր համարում իրեն:

Նրան սրտանց յարգում էին ամեն մէկը. «Ձեմենարի»²⁾ ընկաօր Բօզենբերգ հրաւիրում է նրան իւր երկու ջահիլ գեղանի օրիորդների մօտ դաս առնելու թուաբանութիւն համա-

¹⁾ Ինչպէս երևում է պետական նշանակած թոշակն Արտիւեանի համար ստանում էր Բարրօտը և ինքն ծախսում և պակասն իւր սեպհական միջոցներից հոգում:

բաւակը վրայ, Արեւիկանը շատ ուրախ է զգում, երբ տեսնում է իւր երկու կողմը նստած երկու հրեշտականման արարածներ որոնք իրենց սպիտակափայլ ձեռքերով օգնում են նրան հաշուելու Օրիորդների գեղեցկութիւնը դասի ժամանակ չէին կաշկանդում. նա սովորում էր և մինչոյն ժամանակ իւր սրտում պինդ հաստատելով մի խորին երախտագիտութիւն դէպի այդ ազգը, դէպի այդ հասարակութիւնը, որ այնքան իմաստուն մարդիկ է տուել և այնքան մօտենում է իւր կատարելատիւպին: Արեւիկանը շատ անգամ կամենում է ցոյց տալ, կամենում է յայտնել իւր երախտագիտութիւնը չքնաղ արարածներին, խոստանում է չմոռանալ նրանց լաւութիւնը: Սակայն պարկեշտ ուսուցիչները վիրաւորուած նկատում են—մեղ երախտագիտութիւն պէտք չէ. դուք այդ վերադարձըք ձեր տառապեալ ազգին, որ այնքան մեծ դեր կատարելոց յետոյ, խաբարում է ազգիտեան մէջ. դուք պիտի լինիք նրա փրկութեան և բարձրացման առաջնորդը: Գերմանուհի օրիորդները Արեւիկանի սրտի մէջ ազգային կրակն աւելի և աւելի բորբոքեցին:

Արեւիկանը սովորում է և լատիներէն և այնքան առաջ է գնում, որ, ինչպէս ինքն է յիշում, թարգմանութիւններ էր անում:

Գերմանական ազգի ցոյց տուած բոլոր ընդունելութիւնները նրան այնքան չէին յափշտակում, որ մոռանայ իւր բարեկամներին, մոռանայ այն հայ մարդկանց, որոնք նոյնպիսի կրակով էին տոչորուում, նոյնպիսի իղձերով ոգևորւում: Նա յարաբերութիւն ունէր Մսեր մագիստրոսի հետ: Նշանաւոր տօներին Մսերն իւր ջերմ ողջոյններն էր ուղարկում և Հայոց աշխարհից նրան նոր-նոր տեղեկութիւններ տալիս, նրան, որ հեռու հիւսիսում ազգի և եկեղեցւոյ շահերի համար իրեն մատնել էր սլանդիստութեան ¹⁾:

Մսերեանի նամակը շատ վատ ազդեց նրա վրայ, յիշեց նա Մայր Աթոռի վիճակը, իւր հոգու հետ կապուած այն սրբաւայրը և հառաչեց: Լսեց շարախնդաց միաբանների գործն ու արարքը և ցաւեց: Չկարողանալով դիմանալ, ինքն իրեն սփոփել, մի նամակ ուղղեց նորընտիր կաթողիկոսին, նախ ինքն իբրև հոգևորական իւր սրտագին շնորհաւորութիւններն առաքելով և ապա հեռաւոր ակնարկներով նրան խորհուրդներ տուեց ²⁾:

Հայրենիքի հոգսերը նրան հալումաչ էին անում, մանաւանդ Մսերեանի նամակից յետոյ. ուստի իւր սրտի ցաւերը սագէ փետուրին էր յանձնում. Եւ յիշաւ ինչ անէր, ինչպէս

¹⁾ Տես վերջում. Մսեր Մագիստրոսի նամակը „ի 25 յուն. 1832 ամի“:

²⁾ Տես վերջում „ի 2 մարտի 1832 դեկտեմբերի“:

վերաբերուէր այն հայրենակիցներին, որոնք Բարրոտին ուղեկցել էին մինչև Մասիսի գլուխը և այժմ ուրանում են: Ուսուցչապետը նախազգուշանալով ապագայի առարկութիւններից իր յաջող վերելքի մասին վկայաթուղթ է կազմում և ստորագրութեամբ վաւերացնել տալիս:

Այն օրից անցնում է բաւական ժամանակ և Բարրոտը լսում է, որ հայերն իրենց ստորագրութիւնը—վկայութիւնը հրապարակով յետ են առել և բոլորովին սխալ են համարում իրենց նախկին ցուցմունքը: Հայասէր գերմանացին շատ վշտանում է, իսկ Աբովեանն աւելի շատ: Եւրոպայի արտասուքով լրջւում են, չի կարողանում խօսք գտնել իւր սրտի ցաւն յայտնել, իւր ներքին թախիծը ցոյց տալ: Մի քանի օրեր յաջորդում են միմեանց, սակայն նա կրկին տխուր է և տխուր: Նա մտածում է, մայրում է և ողբում, թէ ինչո՞ւ իւր ազգի մէջ կան այնպիսի անհասկեր, որոնք ազնիւն ու ճշմարիտը ռոտի տակ են տալիս իրենց անձնական շահի համար, իրենց անորոշեք եսի համար: Նա տեսնում է որ իւր ազգն անընդունակ է իւր բարեկամներին, իւր երախտաւորներին: Հայ մարդը յետ է վերցնում իւր ստորագրութիւնը և իւր յիշողութիւնից հանում է այն օրերով քաջած տանջանքները, որին ենթարկուել են իրենք և Բարրոտը:

Բարեբաւը նկատում է որ իւր «հայազն ազնիւ բարեկամը» շատ է վշտանում, ինքն է սկսում նրան մխիթարել, ինքն է սկսում նրան սիրտ տալ ասելով—Թէ դու կամ քո ազգն ինչ մեղաւոր են, եթէ մի քանի հայեր ճշմարտութիւնը մոռանում են և ստութիւնը պաշտպանում: Այսպէս են վարւում և միւս բարեկամները, որոնք տեսնում են նրան տխուր և տրտում:

32 թ. մարտի 3-ին Բարրոտը փողոցով անցնելիս տեսնում է, որ մի ասիացի տարագով մարդ մտնում է ոստիկանատուն: Նորա մտքովն անցնում է թէ գուցէ սա հայ լինի: Ուստի իսկոյն մտնում է նորա ետեւից և հարց ու փորձից իմանում է, որ այդ ասիացին հայ է: մեծ ուրախութեամբ տանում է իւր տուն, հաւատացած լինելով, որ դրանով մի մեծ երջանկութեան հասցրած կը լինի իւր երիտասարդ բարեկամին:

Ժամի երկուսին երբ Աբովեանը տիկին էլհոյցի մօտ ճաշել և մտել էր սենեակ հանգստանալու, դուռը բաց է անում մի անծանօթ մարդ և յայտնում է, որ Բարրոտը կանչում է: Բոլորովին տարօրինակ է թւում նրան այդ, քանի որ Բարրոտը միշտ ժամի մէկին էր ճաշում—ինչո՞ւ ուրեմն այդ ժամին պիտի կանչէր: Եղող և սարսափ տարակուսութեան եմուտ յոսկերս իմ գրում է Աբովեանը: Ձանազան մտածողութիւններով պաշարուած շտապում է նա Բարրոտի մօտ և միանգամայն ասելով է՝ երբ տեսնում է Բարրոտի ընտանիքը հաւաքուած միասին և «ոտար ձևակերպութիւն արձակի ի դիմաց ամենեցուն»:

Նախկին ծիծաղը, նախկին քաղցր ժպիտներն այլ ևս չկային, թէև նրանք երբեմն—երբեմն նշմարւում էին սակայն իսկոյն և եթէ անհետանում, Մաքուր օրիորդ Յիւլիէն ասկեղէն թշուղջ կարմրատակեալ՝ մի խորհրդաւոր բոպէ էր սպասում:

Անժամանակ կանչելը մի կողմից, նոցա տարօրինակ ընդունելութիւնը միւս կողմից միանգամայն սաւացրին զգայուն երիտասարդին: Եւ եթէ հանելուկը իսկոյն չլուծուէր՝ դուցէ նա ուշաթափուէր, բայց յանկարծ միջի դուռը բացւում է և երևում է Բարբօտը առանց նախկին ժպտախառն հայեացքների, լուռ մտախոհ և կանգնելով սեղանի մօտ կանչում է մէկին: Յանկարծ չէմբի մօտ կանգնում է մի հայ. հրաջք էր Արտվեանի համար: «Եւ ես հիացմամբ իբրև ցնորեալ ոք հայիմ ի նա»: Բարբօտը վերջապէս լուծեան վերջ տալով ասում է. «Ես հայ ոք յաշխարհէ ձերմէն: Եւ ուրիշն ինչպէս կարող էր նկարագրել այդ բոպէն, բայց թէ ինքը. ճշուր ջեռու ի փորի իմում, լսելիք իմ չհաւատացին յայսմ, ո՛վ այս նորաստեղծ արարած, ո՛վ բերէ զերջտակս զայս երկնից աստ, ո՛չ հաւատամ, ո՛չ հաւատամ, նա մերձեցեալ առ իս, բարեւէ ինձ հայ»:

Արտվեանը չի կարողանում համբերել—ընկնում է իւր սիրելի հայրենակցի վզով—համբուրում է նրան և բոլորովին կերպարանափոխուած և ուրախական զգացմունքներով պաշարուած: Այդ բոպէին յիշում է նա իւր հայրենիքը, իւր ծնողներն, իւր ազգը: Արտասուքները գլորւում են աչքերից Բարբօտի տունը մի կատարեալ ներկայացում էր. այնտեղ գրկախառնուած մնացել էին երկու հայ: Բարբօտի ընտանիքը լուռ ու մունջ հանդիսատեսն էին լինում, վերջապէս կըշտանալով միմեանցից թողնում են իրենց համբոյրները, թողնում են իրենց զգուանքները և ամեն մէկը մի կողմ քաշւում, զանազան տխուր և մուայլ պատկերները մտքի հորիզոնի առաջ կանգնում:

Արտվեանը յանկարծ աչքերը բարձրացնում է և տեսնում նախկին լուռ ու մունջ, կեղծ տխուր ցոյց տուող բարեկամների շրթունքները ժպիտներ են արձակում, ուրախական ձայներ է լսում ամեն կողմից:

Նա չի զարմանում, որ Բարբօտն այդպէս է վերաբերուել դէպի մի հայ խեղճ պանդուխտ և չի ուզում, որ ուրիշն էլ զարմանայ—ուստի և ասում է—Թող ոչ ոք չզարմանայ, որ այսպիսի մի երևելի անձը պատիւ է համարում իրեն յարկի տակ ընդունելու մի աղքատ ազգեցիկ մարդու:

Ուրախ տրամադրութեամբ նստում են ճաշի: Արտվեանը ճաշի ժամանակ լսում էր թէ ինչպէս իւր բարեկամները ուրախական զգացումներ են յայտնում. «որպիսի գեղեցիկ դէմք, որպիսի նազելի աչքեր ունի այս հայ մարդը»: Այս խօսքերը խորը կերպով տպաւորւում էին նրա սրտի մէջ:

Հարց ու փորձից երևում է, որ Պարսկաստանից Ռուսաստան գաղթելու ժամանակ պարսիկները նրա երկու որդուն գե-

րի են բռնում Նախիջևանի մօտ, իսկ ինքը նեղուած իւր երկրակիցներէից և բռնադատուած իշխողներէից օտարութեան է դիմում, որպէս զի մուրալով մի փոքրիկ գումար ձեռք բերէ և նրանց դերութիւնից ազատէ:

Փարհատի աղետալի նկարագիրը շարժում է Բարբօտի և իւր ընտանիքի գութը, նոքա մոռանալով ճաշը ուշի ուշով լսում են նրա ցաւալի վիճակը:

Բարբարը, որ պատրաստ էր իւր ճաշիւ բարեկամի՝ համար ամեն ինչ կատարել, զգացուած մարդու վիճակից մտնում է իւր առանձնասենեակը և մի ոսկի հանելով տալիս է իւր հինգամսեայ որդի Մօրիցի ձեռքը, որ պանդուխտին տայ: Փոքրիկ երեխան էլ դնում է Փարհատի ձեռքում: Միւսներն էլ մի մի ըուրբի են նուիրում: Բայց այդ ըուրբիներն Աբովեանի սրտին ծանր թախիծն էր նստել ճշգայարանք իմ փայեցան, աչք իմ սևացան, գալարեցաւ սիրտ իմ և մտածմունք իմ թէ մինչև երբ ազգ իմ այսպէս թափառեսցի և մուրասցի ի տունս այլոց, անգորացուցին զիս, յերակունս իմ խաղաց արիւն, յաչս իմ ցընդեցան արտասուքս: ¹⁾

Աբովեանը ցտեսութիւն ասելով իւր բարբարներին՝ Բագալեանին տանում է իւր մօտ. մի օր պահում է իւր մօտ, հարց ու փորձ է անում աշխարհի բոլոր կողմերից և մի ձեռք հագուստ տալով միւս օրը Վիդալեալ սրտիւ, յուղարկեմ լալով ի Պետերբուրգ:

Ի հարկէ այս դէպքը գերմանական մի քաղաքում անհետ չալիտի անցնէր. տեսնել մի հայ մարդ, իւր սիրելի հայրենակցին, խիստ ազդում է նրա վրայ: Ուստի և նա դիմեց գրչի իւր ներքինը լոյս աշխարհ հանելու և ահա պատրաստ է մի ոտանաւոր Ձգացմունք ցաւալից սրտիս ի տեսանելն իմ յօտարութեան գսիրելի հայրենակիցն իմ, զՅահրադ Բագալեան. ի 1832 ամի յ3-ին մարտի ի Դերպտա:

Անցին երկու ամբ և աչք իմ լալով կարօտ մնացին՝
Տեսանել առ իս զոք հայրենակից, զիմ փափագելին
Հաղորդել նմա զիմ վիճակ օտար,
Գրկել զնազելին, ցուցանել զիմ վայր.
Լսել զՀայրենի լեզուն քաղցրանուշ,
Տալ հանգիստ սրտիս մաշելոյ անյոյս:

Յիշում է պանդխտի վիճակը. նրա սիրտը պոնգւում է և կսկըծալից խօսքերով հառաչանքներ է արձակում:

¹⁾ Փարհատի մասին Պ. Ղորղանեանի մօտ գտնուած լիշատակարանը տարբեր է ասում Պ. վ. Աբովեանի մօտ եղածից: Նա հետևեցի վերջինին:

Ձիւնչ մղեց զքեզ, նժգեհնել ասեմ յերկիր այս օտար,
 Ձիւնչ վարեաց զքեզ տարակերել յայս ծով անձանց, անդադար
 Ուր Քո հայրենիք, ուր հայրենակիցք
 Ձիարդ հեռաւոր, զիարդ տարաձիգ
 Նորա անրնկեր և դու անաշխարհ
 Մաշիք կարօտիւ միմեանց՝ չարաչար:

Փարհադի ծննդավայրը նրան շատ է հետաքրքրում, նա հարցնում է ծնուած տեղը. գերդաստանի մասին մանրամասութիւններ է իմանում. Աղետալի սլատեկերն աչքի առաջ առնելով— միմնջում է:

Այսպէս թափառի, այսպէս տարագրի անտուն անտեղի,
 Անբախտ Հայկազուն յամ. անկիւնս ի ծագս երկրի
 Ձիք նմա հանգիստ, չիք նմա կայան,
 Ոչ յօտար աշխարհս, ոչ յիւր ծննդարան
 Նկեալ պանդխտի, լայ զիւր հայրենի
 Մինչև սպառին շունչք նորա յաստիս¹⁾:

Համեմատում է հայ վիճակը թուշուների և կենդանիների հետ և իւր սրտի դառն ցաւն է արտայայտում.

«Ան թուշունք անգամ ունին զիւրեանց բուն, ուր օթագային
 Եւ սողունք անգամ, որ ի սիրտ երկրի անվրդով չըջին.
 Այլ մեզ չիք տեղի՝ չիք ուրեք դադար
 Ի վերայ երկրի, զոր ձեռք Քո արար
 Սահի Հայկազունն՝ միշտ ալեկոծեալ
 Ձաւակ և զտուն զաշխարհ մոռացեալ:

Հայի ճակատագիրն է զբաղեցնում, ուստի և դիմում է այդ բաղդի անխիւն, որ մի ըոպէում հազար տեսակ շուռ գալու ընդունակ է:

Նկեսցէ արդեօք և մեզ ժամանակ
 Ձի անցցէ ի մէնջ անխիստ Քո մուրհակ,
 Տեսցուք և մեք լոյս ի մերում գիտի¹⁾
 Զոր ձրի վայելեն համայն ազգք երկրի²⁾:

Բարբոտը տեղեկանալով այս ոտանաւորի մասին, խնդրում է թարգմանութիւնը. Աբովեանը յանձն է առնում գերմաներէն թարգմանել նոյնպէս ոտանաւոր. ձեռով Բարբոտը կարդալով թարգմանութիւնը շատ ուրախանում է, որ իւր բարեկամն այնպէս յաջող թարգմանել է և իւր բարեկամի տխրութիւնը տեսնելով աշխատում է մխիթարել զանազան միջոցներով ճշագմիլցս ցուցանէր ինձ զպատկերս Հայրենեաց մերոյ. կամ ըն-

¹⁾ Յիշատակարան Պ. Ղորղանեանի մօտ գտնուած. միայն մի քանի տները վերցրի տեղի սղութեան պատճառով:

Թեոնոյր զպատմութիւն ինչ ի վերայ աշխարհի մերոյ, առ ի դիւրացուցանել զաղէսս սրտի իմոյ:

Այս դէպքից յետոյ սկսում է նրա սովորական կեանքը, դասերը, հիւրասիրութիւնները, պարգևները և այլն: Մի պարգև, որ այնքան մեծ նշանակութիւն ունեցաւ նրա համար—այդ աիկին Ֆրիդլենդերի նուիրած «զարմանագործ քարն» է, «պատուականաձև յօրինեալ»: Գերմանուհին իւր նուէրը տալով ասում է. «Դի կնիք ձեր և առի յիշատակ յինչն մատուցանեմ ձեզ ասէ դայս քար, շինեալ ի հայրենիս իմ ի Շօտտլանդ. այս եղիցի ձեզ պարգև մանաւանդ վկայ զի ի հայրենիս իմ շինեցաւ»:

1832 թ. մարտի 22-ին նախ քան ճաշ 11 ժամին վախճանուեցաւ տիեզերահռչակ Գէօթէն, գերմանացի հանճարի մահն ինչպէս որ սուգի և տխրութեան մէջ ձգեց Գերմանիան և առհասարակ մարդկութիւնը, նոյնպիսի տխրութեան մէջ է ձգում և Արքովանին, որ այնքան յափշտակուած էր իւր սիրած ազգի հանճարներով:

Արքովանի ընդունակութիւնները նկատելի էր շատերին, ուստի իւր բարեկամներից մէկը՝ Շվէբա, որ բացի ընդունակութիւնից տեսնում էր նրա մէջ ուսման անյազ ծարաւ և եռանդ, մի անգամ հարցրեց—արդեօք ձեր հայրից ուրիշ չկայ, որ էլի դայ մեզ մօտ սովորէ. շատ ցանկալի էր, որ դուք իբրև մի նշանաւոր հին ազգի ժառանգներ և ընդունակ ժողովուրդ աւելի շատ թուով գայիք մեզ մօտ և ուսանէիք:

Արքովանը պատասխանում է—որ կայ մէկը Ստեփաննոս անունով (Նազարեանի մասին է) շատ սէր ունի սովորելու, անցեալ տարի շատ աշխատեցայ բերել, սակայն չկարողացայ:

Նրիտասարդ Խաչատուրը բաւական չէր որ իրեն համար տեղ էր արել. նա ցանկանում էր որ Հայաստանը բազմաթիւ ուսումնականներ ունենար: Ազնիւ գերմանացին խոստանում է Արքովանին իւր հաշուով Պետերբուրգ ուղարկել և միջոքորել Ստեփաննոսի համար. բայց նա անյարմար գտնելով իւր գնալը—առաջարկում է Շվէբային. Սա աւելորդ է համարում դիմել մինիստրին, այլ խոստանում է իւր սեպհական միջոցներից հոգալ նրա ծախսը և կարիքները և խոստանում է ոչ միայն Ստեփաննոսի համար աշխատել, այլ շատերի համար մտածել և «բարձրացուցանել զողորմելի ազգն ձեր»:

Արքովանը իւր ժամանակը յաճախ նուիրում էր բանաստեղծութեան կամ Թարգմանութեան, Թարգմանականը ընդհանրապէս արձակ չէր լինում: Եթէ պատահում էր մի հանդիսում երգում էին մի որևէ երգ կամ նուագում զանազան ռոմանսներ, անմիջապէս ձեռնարկում էր Թարգմանութեան և բաւական յաջող (Շիլլեր, Հեյսլու և ուրիշները սիրելի էին. աւելց «բաղձանք երիտասարդի իդէալ. բից Ադելստան—Բոզլսէն»):

Իւրաքանչիւր մի դէպք, իւրաքանչիւր ուշագրաւ եղելութիւն նրան գրաւում էր, նրա սրտի լարերի վրայ խիստ ազ-

դուժ էր. ուստի անմիջապէս գրելը ձեռք էր առնում և խօսում իւր մուսաների հետ: Երբեմն իւր ներքին ցաւն էր յայտնում, երբեմն սէրը, Թախիծը կամ ուրախութիւնը:

Մի չքնաղ օրիորդ կար, որ սաստիկ կաղում էր, բայց անչափ համեստութիւնից գրութիւն չէր բարձրացնում, այլ միշտ գետնին էր նայում: Կարեկցելով այդ նաղելի արարածի դժբաղդութեան, դիմում է իւր մուսային զգացմունքներն արձանագրելու ¹⁾:

Գրականական զբաղմունքները, հայրենիքի կարօտը, բա-

¹⁾ Զինչ այս դառն հարուած անդուժ օրհասին

Որ ճնշէ գլխդ դուստր երկնային,

Փուշ բուսան յաչս, սիրտ իմ գալարի,

Մինչ այս Գո վիճակ ինձ յանդիմանի:

Գուցէ Գո անմեղ հոգի զայս դիպուած,

Տանի անտրտունջ, տանի լուակաց

Այլ յարեաւ ծփայ բոլոր իմ ներքին

Ուր և տեսանեմ զայս ծանր Գո խոցուած:

Հայի երկիր, ուր աչքդ արաստուածոր

Հայի պահպանել զոտքս դիւրագլուր

Եւ սիրտ նորա թնդայ որոտմամբ

Կայծակ հառաչման Գո աղետաւոր:

Հայիս ի յերկինս, աստեղք հեծեծեն

Հայիս ի յերկիր, արարածք կոծեն

Դէմք քո հրեշտակային լի անմեղութեամբ

Զօ համայն կարեկցաց հոգիս խոցոտեն:

Արտասուքն քարինք, ուր քո քայլափոխ

Այդպէս դժուարաւ շարժէ զիւր փոփոխ.

Թող ինձ տարածել ի ներքոյ ոտից

Գոց զիմ երես, զի անցցես դիւրակոխ:

Յոսկեձոյլ քո կուրծ ոհ ոչ խաղասցի

Ձեռք ինչ պատանւոյ քնքոյն փեսայի

Ոհ վարդ քո այտուց և ծաղիկ տիոցդ

Այդպէս դիւրաթափ վաղ թարչամեսցի:

Ի չաւիղս ծաղիկք թափեսցին

Օրիորդ չքնաղ, վարդատիպ, անգին,

Հրեշտակք բարձցին գլխդ ի վերայ թևոց

Զի մի թուականով ոտք քո գայթեացեն:

Թող աչք դիւրախաբ կենցաղասիրաց

Ժխտեսցեն զվարձ քոց առաքինութեանց

Գեղ ի յառազաստ երկնից խորանին

Տացէ հարսանիս փեսայն ի բարձանց:

քեկամների գգուանքը միախառնուելով Արովեանին դարձնում էին մի թեթև տաշեղ ալեծածան ծովի կոհակներին մատնուած։ Նա մերթ տխրում էր, մերթ ցատում էր իւր հայրենիքը յիշելով, մերթ ուրախանում—մխիթարում իւր անգին բարեկամներին մտաբերելով։

Տխրութեան և վշտի նժարը շատ անգամ աւելի էր ծանրանում. երբեմն այդ սիրտ մաշող զգացումներն աւելի և աւելի կենդանանում էին և զարգանում։ Աւելացնենք դրա վրայ և հայ հոգևորականութեան կոյր նախանձն և անասման ատելութիւնը և նոցա լարած չարաթոյն որոգայթները Արովեանի համար։ Նրանց զրպարտութիւններին չափ չկար. կաթողիկոսի մօտ վաղուց արդէն սևացրել էին Արովեանի անունը։ Այս բոլորը յայտնի էր նրան, ուստի և նա իրաւամբ դանգատում է կաթողիկոսին անգութ կղերականների վրայ։

Այսպիսի շինծու լուրեր շատ խիստ ազդում էին նրա վրայ. նա միշտ մտածում էր իւր ապագայի վրայ—թէ մի գուցէ այդ անմիտ զրպարտութիւնները խոչնդոտ լինին իւր գործունէութեան։

Արովեանը շատ անգամ խիստ զրգռուելուց զանազան անմիտ մտածմունքներ էր անում. բազում անգամ զմահ խնդրէի ինձ, եթէ հնար լինէր ինձ, մտադրեալ էի դեղամահ լինել, բազում անգամ ի սաստիկ ձմրան առանց ջորապի գնայի, զի գոնէ այսու գտայց զմահ իմա։

Անհանգստութիւն պատճառող առիթները շատ էին. վշտի անհուն ուկիւնոսը գլորող գէպքերը քիչ չէին մանաւանդ ճանիւրաւ բռնաբարութիւն հոգևորականաց մերոց, աստ որպէս կարացից մոռանալ զայն։ Սակայն ամեն անգամ իւր սիրելի բարեկամները հանգէս էին գալիս մխիթարելու, որոնք ամեն միջոցների դիմում էին նրան հեռու պահելու այդ տեսակ մրտածմունքներին։ Նրանք վաղուց էին նկատել նրա ջղային բռնութիւնը և բոլոր ցաւերի դարմանը նրանք ուսման և դիտութեան վրայ էին մատնացոյց անում և այդպէս առաջնորդում։ Արովեանի ցաւերի և տխրութեան դուռը աւելի լայն էր բացւում, երբ ծնողներին նամակ չէր ստանում. սակայն մտերիմները քաղաքապետի միջոցով կարողանում էին տեղեկութիւն ստանալ։

Ամենամօտիկ ուսուցչապետներին մէկը Դրասը, իւր բացակայութեան ժամանակ նամակագրութիւն ունէր նրա հետ և եթէ մի քանի օր ուշանար այդ նամակները՝ միմեանցից շատ էին վերաւորում։ Դրասը մայրն անգամ միշտ առանձին նստակ էր զրում և պատասխան ստանում։ Նրանք այնքան սիրել էին, որ մայրը Կորդի բառով էր յորջորջում, իսկ Դրասը «նղբայր»։

32 Թուականին ամառուայ արձակուրդներին իւր բարեւրանների ցանկութեամբ նա ուղքով ճանապարհորդում է Դորպատի մօտիկ ամառանոցը Ֆրիդրիխսհոֆ. Արովեանի բարեկամ-

ներից մի քանիսն այնտեղ էին, որոնք շատ գեղեցիկ ընդունելութիւն ցոյց տուին և չորս օր պահեցին նրան իրենց մօտ Նախ քան նրա գնալը բարեկամները արդէն խօսել էին իրենց ծանօթների հետ Արովեանի մասին: Ուստի ամեն մէկի մօտ տանում ծանօթացնում էին. Հայաստանը միշտ զբաղեցրել էր նրանց, ուստի և շատերը խիստ հետաքրքրւում էին և մինչև անգամ փափագում էին տեսնել այն աշխարհը—որ մարդկութեան օրօրան կոչուելու բաղդն ունի, որտեղ Գահնօֆոնն այնքան գեղեցիկ հիւրասիրութիւն է տեսել: Ի հարկէ Արովեան մխիթարւում էր այդ խօսքերից և միշտ իւր ազգի պանծալի անունն առանձին հրճուանքով էր յիշում ¹⁾).

Այստեղից նա մտադրւում է ճանապարհորդել և մօտակայ զանազան քաղաքներ. Դրասի բացակայութիւնը Դորպատից շատ էր ազդել Արովեանի վրայ, ուստի նա փափագելով փափագում էր տեսնել նրան. ցանկանում էր այցելել նրան և “եղբայր” արարածին փարուել և սրտի կարօտն առնել:

Դրասն ապրում էր Ռիգայի մօտ Պոնիմոն կոչուած տեղում. Յունիսի 11-ին շաբաթ օրը Ֆրիդլինդեր պրօֆէսորի հետ ուղևորւում է դէպի Պոնիմոն. ճանապարհին նոքա պիտի պատահէին մի քանի քաղաքների Միդաու, Դեօնբերգ, Ռիգա և այլն: Ամեն տեղ քաղցր ընդունելութիւն է գտնում իւր բարեկամներից: Դրասը լսում է որ իւր սիրելի եղբայր Արովեանը Ռիգա է. շատ է ցանկանում Պոնիմոնից ընդ առաջ գալ, սակայն ընտանեկան հանգամանքները թոյլ չեն տալիս: Պոնիմոնին մօտենալը աւելի և աւելի ուրախական զգացումներ է զարթեցնում նրա սրտում. ճազարաւոր մտածմունք խնդութեան երևան և դան ի միտս իմ. այս դրութեամբ պիտի տեսնէր իւր սիրելի և անձնուէր բարեկամ Դրասին:

Սկզբում նա պատահում է Դրասի մօրը, քաղցրաբարոյ տիկինն ընկնում է Արովեանի պարանոցով “որդեակ իմ” խօսքերով: Ապա Վարօտ աչք իմ իսկոյն ճանաչեն զթանգագին բարեկամն իմ, սխալմա առ նա և փաթաթեալ զմիմեամբ—ոչ ոք ի մէնջ զօրէ խօսել բան ինչ. բազմիցս թողեալ, անդրէն փարիմք զմիմեամբք:—“Իմ Խաչատուր, եղբայր իմ” բառերով է դիմում:

Պոնիմոնում շատ գեղեցիկ ժամանակ է անցկացնում, որի մասին և ինքը հիացմամբ է յիշում. Դրասի եղբայրական մըտերմութիւնը խառնուած իւր նազելի քրոջ ²⁾ սիրոյ հետ Ա-

¹⁾ Իւր ճանապարհորդական տպաւորութիւնները չէ մոռանում գրի անցկացնել. նա յիշում է իւր ստացած բոլոր պախլները, զբօսանքները, խօսակցութիւնները:

²⁾ Դրասի երեք քոյրերից (Մինա, Աննա և Լօտէն), ինչպէս երևում է Լօտէն է շատ դիւր գալիս և մինչև անգամ փո-

բովեանին բոլորովին կաշկանդել էին. Այդ կէտը, որ այնքան նշանակութիւն ունի նրա վրայ, դժբաղդաբար նա չէ յիշատակում, այլ զանց է անում ձգ է աստ տեղի յիշել զամենայն վայելչութեանց, պատահելոց ինձ ի Պոնիմոն առ սիրելոյն իմոյ Գրասի, այլ զիմ միտս այլ առարկայ պարապացուցանէ, նշանակեալ աստ. ո՞վ նա-քոյր նորա չքնաղ, որ յօրէ ծանօթութեան իմոյ ընդ նմա թուէր զամենայն բախտ իմ կենցաղական յինքեանս գրաւել, հրեշտակային նոր գոյացութիւն յարոյց ի սիրտ իմ զայն սէր, զոր սիրտք անախտք միայն կարեն պարգեւել միմեանցս: ¹⁾

Փոխադարձ համակրութիւնը, սէրը չի յիշատակում զվիճակէ սիրոյ մերոյ թողում յայլում ժամու ստորագրելն: Այսպիսի գրութեան մէջ հեռանում է Աբովեանը. գնում այնպիսի մի ժամում, երբ նրա լեզուն խօսք չէ գալիս, գրելը չէ շարժւում այդ կաշկանդիչ զօրութեան առաջ—որ այնքան լայն հոսանքով տարածուել էր երիտասարդի ամբողջ էութեան մէջ. «մեք բաժանիմք և որ սիրահար սիրտ ո՞չ կարէ զգալ զդառն հարուած դոր կրեն սիրահարը...»²⁾ Նա թողնում է մեր զգացումներն այդ բաժանման տպաւորութիւնը և այնպէս է հեռանում:

Այսպիսով նա գտնում է և մի երրորդ արարած, որի հետ պատրաստ էր կապուել—աւանխտ սիրով: Այս սէրը նրան հանգիստ չի տալիս, նա դադար չի գտնում, ուստի կրկին դիմում է մխիթարութիւն տուող թախիժ փարատող անմահ հոգիներին—մուսաներին, սակայն ամեն ինչ նորան բաւականութիւն չէին տալիս, սար, ձոր, անտառ, թուփ, տերև ոյժ չունին նրան մեղմացնելու: Սիրոյ հօւրը լափում է երիտասարդի սիրտը ճանեակ իմ ոչ ետ ինձ մխիթարութիւն, արտաքս չչնջան ծառք և լռին մայրին խոստանայ ինձ սիրովանս, ելանեմ անդ և ահա վիճակ իմ:

Նստո՛ւր զվերջին համբոյր հրաժարման
Քաղցրիկ վերջալոյս սիրուհւոյն իմոյ.

Շողեցիր նմա լոյս մխիթարական
Ննջել զգիւներն հանգստութեամբ հոգւոյ:

«Ի դրան թէ յայգտջ թէ ի լուսամտի
Ուր ընդ թևովք քովք գրկախառնէաք
Ուր ետուր նմա զիմ ողջոյն կրկին,
Զիմ ալեկոծեալ սրտիս աղաղակ...»

Զգացումած սրտով հեռանում է Պոնիմոնից և գնում է

խաղարձ սէր զգում. Շատ տեղ անունը չէ տալիս, այլ Լ. է դրնում և անցնում.

¹⁾ Այստեղ երկու երես բաց է թողնուած յիշատակարանի մէջ.

կրկին Ռիգա էլի Պոնիմոն գալու պայմանով: Գրասի եղբայրը լաւ է ընդունում Արուսեանին, ծանօթացնում է իւր բոլոր բարեկամներին հետ: Քանաստեղծ քաջ՝ Գլազդին և ուրիշները տանում են ցոյց տալիս քաղաքի բոլոր նշանաւոր տեղերն, որոնցից ամենից նշանաւորը Մայր եկեղեցւոյ գագաթին էր, ուր երկար ժամանակում հազիւ են կարողանում բարձրանալ: մի «նագելի օրիորդի» առաջնորդութեամբ: Հոյակապ շինութիւնը ապշեցնում է նրան և գագաթից դիտում են ամբողջ շրջակայքը, ամեն մի երեւող առարկայի համար առանձին ծանօթութիւն են տալիս: Ապա Գրասի եղբայրը փորագրում է Արուսեանի շնունդը և ազգանունը «ի վերայ երկաթեայ գմբէթին»: Իջնում է այնտեղից մեծ տալաւորութեան տակ, յամենայն կողմանէ քարշեն զիս բարեկամք իմ հայիլ յայս կամ յայն»:

Թէ Պոնիմոնում և թէ այստեղ իւր բարեկամների առաջնորդութեամբ են շրջում է զանազան գիւղեր. ծանօթանում է գերմանական գիւղական կեանքին, նիստ ու կացին: Մասնակցում է նոցա ուրախութիւններին, պարերին (ինչպէս երեսում է լաւ գիտէր երոպական պարեր. պ. Վարդ. Արուսեանը լսել է մի քանի գերմանուհիներից, որ իր հայրը նրանց հետ պարել է և յաջող). մասնակցում է հրէաների հարսանիքներին և ուրիշ այնպիսի բաների, որ իւր մտքովն անգամ չէր անցնի:

Հետ իր խոստման նա կրկին դառնում է Պոնիմոն, որպէս զի մի քանի օր էլ սէր վայելէ, մի քանի օր էլ տեսնէ սիրելի բարեկամի և սիրունու երեսը, մի քանի օր էլ չնչէ այն օդը, որը շնչում է Լօտէն: Սակայն երկար չէ կարողանում մընալ իւր մտերիմների մօտ: Յուլիսի 19-ին թողնում է Պոնիմոնը. բայց խիստ տխուր տալաւորութեան տակ. միայն սիրող սիրար կարող է մտնել նրա վիճակը, ըմբռնել նրա վիշտն ու թախիժը, և ո՞ր սիրտ կարէր լռել, ունելով զայնպիսի բարեկամ: Հրաժեշտի երեկոյեան շատ է տխրում. «սիրելին իմ Լ. ոչ սակաւ քան զիս երևէր ի արտմութեանս վարակեալ, ձեռն ի ձեռն շրթուն ի շրթուն, ջանայր երկնային գոյացութիւն մեղմել զպտորեալ սիրտ իմ: Քանիցս յարոյց նա զթմբբեալ բազուկս իմ ի վեր և անոյ լեզուաւ իւրով խրատէր իբրև այր տանել զայդպիսի ծանրութիւնս, զայնպիսի ալեկոծութիւնս և մրկկումն զգացուաց»:

Լուսանում է առաւօտը: Լօտէն իւր մխիթարական խօսքերով սփոփում է նրան. մինչև բաժանման բոպէն չէ հեռանում նորանից և միմիայն մխիթարում էր, չմտածել իւրեանց սիրոյ մասին, խորհել միայն իւր ուսման մասին, չիչէ միայն փշոտ ապագան և սպառազինուի փայլուն զէնքերով, գիտութեան պաշարով:

Վերջապէս քաղցր համբոյրներով մնաս բարեաւ է ասում, հրաժեշտի ծանր ողջայն է տալիս. կառք նստելիս «հայիս միւս անգամ ի ցանկալի դէմն որ կացեալ առ դրան, ցաւալից ալ-

նարկէր յիս¹։ Սակայն Աբովեանը աշխատում է ուրիշներին ներկայացնել չանել իւր վառուած սէրը, որ պարզ կերպով կարելի էր նշմարել նրա ցոլացող աչքերի, վարդապոյն այտերի թանձր կտրմութեան մէջ։ Նա ինքն իրեն յուսադրում և զգուշացնում է. «ժածկեմ զդէմ իմ զի մի այլք նկատեսցեն զօտար նշանս ինչ ի մեզ, այլ նորա թանգագին դէմք. նորա երկնատիպ քաղցր ակունք ոչ հեռանան յաշաց իմոց»։

Սլացաւ կառքը դէպի Դորպատ տանելով իւր մէջ մի սիրող սիրտ։

Աբովեանը իւր զգացումները, իւր ուշքը թողել էր Լօտէնի մօտ. ուրիշ բան չէր միտքը գալիս, բայց թէ սիրունին։ Միշտ կարծում էր թէ նա խօսում է իր հետ «որ անձայն թրւէր ասել ինձ, արի կալ ի նպատակս իմ և յամենայն գործս»²։

Նա այնքան յուզուած էր ճանապարհին, որ չի իմանում ինչ տեսակ է գնում կառքը և ինչ են խօսում ընկերները։ Տեսարանները և պատահած նշանաւոր տեղերը բոլորովին աննշանակալի են անցնում. նրա ուշադրութիւնը յափշտակուած էր և չէր կեդրոնանում, ուստի և ոչինչ չէ յիշում ամբողջ ճանապարհից, բայց միայն թէ ինքը մայրի ծառերի միջով է անցել։

Ամառուայ ամիսների գլորուելով վերջանում է և նրա երկրորդ տարեշրջանը։

Գ.

Դորպատի կեսնքի Գ. Դ. եւ Ս. տարիները ¹)։

Բարբոտն որ այնքան ջերմ սիրով սիրում էր Աբովեանին, սիրում էր Հայաստանը, հայազգը և իր վառ և բոբբոբ սէրը յայտնում էր միշտ գործով։ Նա հայոց ազգի կտթուղիկտին և ծանօթ եպիսկոպոսներին նուէրներ էր ուղարկում իւր «ազնիւ հայկազն»-ի միջոցով։ Նրա նուէրներն անգին էին. նա չէր ուղարկում մատանիներ կամ այլ զարդեր, որ նրանով պճնուին և ի ցոյց մարդկան շրջեն։ Ոչ—այլ Հայաստանի յիշատակներէց, Արարատի և Էջմիածնի պատկերները, որոնք հսկայանման կանգնած են հայրենի հողի սրտում։ Բարբոտը գրում էր և հայոց պետին. և ի հարկէ Աբովեանը պիտի թարգման հանդիսանար այդ նամակներին ²)։

¹) Ճանապարհորդութիւնից յետոյ չի շարունակուած նրա թանկագին յիշատակարանը. ապա գալիս է ուրիշ տեսորակ մարտի 19-ից, 39 թ. Անպատճառ այդ միջոցն էլ գրած կը լինի, սակայն կորել է չկայ պ. վարդան Աբովեանի մօտ։

²) «Արարչանկատար կաթողիկոս հայոց Յովնանէս, անցեալ ամի 1832 առաքեցի ընդ փօշթին գերկու ջուխտ պատ-

Աբովեանը շատ ուրախանում էր երբ իւր բարերարը յարգում էր հայոց հայրապետին և խորին յարգանքը մատուցանում երբեմն նուէրներով:

33 թ. ապ. 25-ին լուսաւորութեան նախարար Լեւինը գալիս է Դորպատ: Բարբոսը Աբովեանի հետ գնում է այցելութեան: Նախարարը մանրամասն հարց ու փորձ է անում նրա կացութեան, ուսման և յառաջագիմութեան մասին և միշտ «բարեկամ իմ» խօսքով է դիմում: Ապա հարցնում է թէ ինչ նպատակ է ընտրել, արդե՞ծ ռուսաց դպրոցներում կը ծառայէ աւարտելուց յետոյ թէ «հոգևորականաց վարժարանի» մէջ: Աբովեանը պատասխանում է, «որ այդ կախուած է նորա բարեհաճ տրամադրութիւնից»:

Պրօֆ. Բարդիլը «այր բարեհոգի և ազատ ի դատմունս» խօսակցութեան ժամանակ առաջարկում է Աբովեանին նախ և առաջ աշխատել արհեստներ մտցնել Հայաստանում և ապա ուսում:

Լեւինի գալուց յետոյ հազիւ է անցնում մի ամիս և փոխում է նախարարը. սրան յաջորդում է Ուվարովը, որ գալիս է Դորպատ ու լաւ ընդունելութիւն գտնում: Ուսանողական հանդէսներ են սարքում, որին մասնակցում է և Աբովեանը:

Ընդհանրապէս այսպիսի գէպքերն ուրախացնում էր Աբովեանին. բայց երբեմն տխրում էր ինչ թէ միայն իւր հայրենիքն յիշուց, այլ իւրաքանչիւր մի բարեկամից հեռանալուց. այդ ժամանակները Դորպատից պիտի հեռանար իւր երկրորդ բարերար պրօֆ. Ֆրիդլենդեր և իւր ամուսնու հետ գնար Անգլիա: Հրաժեշտի ժամանակ Աբովեանը տխրութիւնից իրեն կորցնում է, արտասուքներ է որ թափում է նորա աչքերից:

կերս՝ որոց երկուքն մեծ Արարատ, իսկ միւս երկուքն ս. Աթոռ Ձեր զվանս էջմիածնի նկարագրէին, մի ճուխտն յանուն սրբազնութեան Ձերոյ, իսկ միւսն վեհապետութեան Սփրեմի առաջնորդեալ յատուկ նամակովք իմովք և ներքին ջերմեռանդութեամբ առ ծայրագոյն անձին Ձեր:

Տարակուսութիւն իմ ի վերայ անպատասխանի մնալոյ իմոյ մինչև ցարդ կարծիս տայ ինձ, թէ մի գուցէ նոքա ոչ հասին ամբողջ ի սուրբ Աթոռն Ձեր, առ որ և ստիպէ զիս մատչիլ միւս անգամ խոնարհական խնդրով առ Ձերդ սրբազնութիւն, յուսալով միամիտ առնել զիս ի մասին այսորիկ, որով զիս յանչափս պարտաւորէք լինել:

Ձերդ սրբազնութեան

յամենայն անձնէ գոհական և անձնանուէր ծառայ

Դօքտոր Պրօֆէսոր

Վայսերական համալսարանին Դերպտ—Բարձրօտ:

33 թ. Մարտի—

«գերկնատիպ երես իւր ինձ մատուցանէ խորին ոգւոց քաշելով: առանց տալոյ ձայն ինչ. որպէս թէ կամէր այսու ասել ինձ «սա եղիցի» կնիք անխախտ և մայրենի սիրոյ իմոյ առ քեզի բոլոր կեանս Քո ուր և իցէ»:

Արտվեանը չի դիմանում—նա յայտնում է իւր զգացմունքները «քեզ ոչ մուսացի հոգի իմ յաւիտեան, զոր դու այնպէս արժանաւորեցիր»:

Իւր միւս բարեկամները տեսնելով նրա վիշտը, ցաւը, չըջապատում են և մխիթարում նրան զանազան յուսադրական խօսքերով:

Գ. տարին էլ անցնում է նոյն ձևով և նոյն ընդունելութիւններով:

33 թ. ամառը, արձակուրդների ժամանակ նա կրկին ճառաւարհորդութիւններ անում: Այս ուղևորութիւնը նոյնպէս ուրախալի և կրթիչ է լինում:

Վերադառնալով Գորպատ նրա կեանքի մէջ մի նշանաւոր երևոյթ է կատարւում. նա Բլումէն պրոֆէսսորի մօտ ծանոթանում է ռուս յայտնի գրող և նոր գրականութեան հիմնադիր Ժուկովսկիին հետ: Ժուկովսկին մեծ ազդեցութիւն ունեցաւ Արտվեանի վրայ. կարծէք իւր հոգին տուեց երիտասարդ հային—լինել իւր աշխարհում նոյնպէս հիմնադիր նոր գրականութեան: Նա շատ զգացուեց և ուրախացաւ «երակք շարժեցան խնդութենէ տեսանել զայրն անուանի, զնախագլուխն գրականութեան ռուսաց, գուռուցիչն արքայադէմ»:

Պրոֆէսսորը ծանոթացնում է Արտվեանին «Հայկազն յԱրարատայ» խօսքերով: Հռչակաւոր դաստիարակը համեստութեամբ ընդունում է նրան ասելով «Եւ ես բերեմ ձեզ ի Մոմբլանէ ողջոյն»:

1) Ժուկովսկին իւր խօսակցութեամբ իւր գաղափարներով շատ դիւր է գալիս Արտվեանին: Մի քանի ժամում ամբողջ Իտալիան իւր բանաստեղծական լեզուով պատկերացնում է նրա առջև:

Որքան օտար երկրի վայելչութիւններն անթիւ են և շատ որքան բազմատեսակ են այդ քաղցրութիւնները, սակայն նրա հոգին ու միտքը, նրա սիրտը միշտ հայրենիքի հետ էր. խօսակցութեան ժամանակ, ճաշի նստած, թէյ խմելու միշտ յիշում էր իւր ազգը, իւր ծնողները, էջմիածինը, Հայաստանի կապուտակ երկինքը, գովարար օդը և իւր սրտի խորքերից հառաչներ արձակում, մին ու վաներ դուրս թողնում: Նա չէր կարողանում այդ կրակը հանգցնել, ուստի և իւր ցաւերը բարեկամներին էր յայտնում. «Բարձր արժանապատիւ հայր, եթէ պանդխտացելոցն քաղցր է միշտ լսել երբեմնակի զվիճակէ հայրենեաց, լսել զծր-

1) Ժուկովսկին գնացել էր Իտալիա ճանապարհորդութեան համար և առողջութիւնը վերականգնելու:

նողաց, զբարեկամաց, զգալ թէ կան անդ հոգիք, որք զյիշատակ նորա բարեկամական սիրով արծարծեն ժամանակ առ ժամանակ, քանի առաւել ինձ, որ ամենայն հոգւով ամենայն անձէ կախիմ զնմանէ և զամս 3 կամ հեռի ի նմանէ, որ դեռ ոչինչ վայելութիւնք օտար աշխարհաց կարացին փոխանակել զայն քաղցրութեան, զայն մխիթարութեան, զայն երջանկութեան, զոր միմիայն ցանկալի հայրենին պարգէն որդւոց իւրոց: Ձայս ամենայն զգացի և զգամ զցայդ և զցերեկ առանց գիտելոյ:

Շատերն օգտուում էին Աբովեանի ուսմանը և իմանալուց, ուստի ոմանց սովորեցնում էր այդ լեզուն նրանց խնդրի համեմատ, Գրափի և Եղիշոյի որդոց հետ պարապում էր, նրանք էլ փոխադարձաբար լատիներէնում էին վարժեցնում:

Միայն դասերը չէին, որ զարգացնում էին նրա միտքն ու հոգին. այլ այն ամեն խօսակցութիւնները, որոնք տեղի են ունենում մասնաւոր շրջաններում: Այդ կենդանի դասերը դրոշմւում էին նրա հոգւո մէջ. գիտնականների շրջանում միշտ զանազան հարցերի համար վիճաբանութիւններ են լինում և նա լսում էր, ներկայ էր լինում նրանց դօքտորութեան քննութիւններին: Նա ներկայ էր լինում և այն բոլոր վիճաբանութիւններին, որ լինում էր արեւելեան գրականութեան, լեզուի ծագման, փիլիսոփայութեան զարգացման մասին: ¹⁾

Գրականական առաւօտներին և երեկոներին միշտ մասնակցում էր, որտեղ կարգում էին Գեօթից կամ Շիլլերից. այդ տեսակ հանդէսները մի առանձին տպաւորութիւն էին անում նրա վրայ:

«Հռչակաւոր երաժիշտ Հէնդել» Դորպատ գալով համալսարանի դահլիճում 150 հոգուց խումբ է պատրաստում կոնցերտի համար. խմբին մասնակցում է և Աբովեանը:

Անցնում է ձմեռը և նոյն սովորական կեանքի շրջանն էլ գլորւում է: 1834 թ. ամառը նա կրկին ճանապարհորդում է Ֆրիդրիխսհոլմ ռոյ չքաւորութիւն, ոչ ժլատութիւն, այլ միմիայն այս մտածմունք դրդեցին զիս ճանապարհորդել յայսմ ամի հետիոտս առ իմ վաղեմի ծանօթ ընտանիքն պատուական տանն Բէհագելի:

Նրա կեանքում, նրա հետաքրքրութեան առաջ երբեմն խոչնդոտներ են հանդէս գալիս, բայց և այնպէս յաղթութիւնն ինքն էր տանում: Աբովեանը մի անգամ կամենում է մտնել մի հացագործի մօտ հաց պատրաստելու եղանակը սովորելու: Գերմանացին արգելում է, կարծելով թէ կը սովորէ իր արհես-

¹⁾ Աբովեանը իւր համալսարանական ուսմունքների, պարապմունքների մասին չէ խօսում: Նրա յիշատակարանները պարունակում են միայն իրեն ցոյց տուած ընդունելութիւնները ու հիւրասիրութիւնները:

տը և իւր առևտուրին կը վնասէ: Զգայուն Աբովեանը չի դիմանում, սկսում է լաց լինել և ասել—ես մէկ անբաղդ ազգի որդի եմ, ես այդ բանը սովորելով, չեմ կամենում տեղս քեզ վնասել, այլ ցանկանում եմ տանել այդ արհեստը իմ անբաղդ հայրենիքը, որ այդպիսի բաների շատ կարօտութիւն ունի: Վերջապէս դիմանում է գերմանացին և թոյլ է տալիս սովորել: Քաթայ (կարկանդակ) պատրաստելը արդէն սովորել էր իւր բարեբարունաց. հաց պատրաստելն էլ այստեղ է սովորում այն պայմանով միայն, որ ինքն էլ նրա որդուն կարգաւ գրել սովորեցնէ (վ. Աբովեան):

Բարեբարունին ըստ ցանկութեան իւր բարեկամի խոհանոցում խմորեղէն պատրաստել էր սովորեցնում. միանգամ երբ Աբովեանը սաւանը առջևը կապած լսում էր «ագնիւ» տիկնոջ հրամանները, յանկարծ մի քանի կանայք են մտնում և ներկայ լինում այդ տեսարանին: Հիւրերը շատ ծիծաղում են ասելով—ինչո՞ւ ամեն բանի մէջ էլ ուզում է խառնուել... 1):

Մինչև 34 թ. Դեկ. 22 Աբովեանը համարեա՞ գրաբար էր գրում. դրանից յետոյ զգում է աշխարհաբարի կարիքը և սկսում է գրել մեծ մասամբ աշխարհաբար: Ինչպէս երևում է նա ունեցել է աշխարհաբար գրած ոտանաւորներ դեռ շատ վաղուց, օրինակ նա շատ ափսոսում է մի տուն կորսուելու վերայ «չունքի էնտեղ իմ սրտի դարդս իմ անանուն սիրունայն լալով պատմելով, նրան հաթաթայ եմ տալիս, թէ նա աշխարհ քումս կարճ կեանք ունի, նրա գեղեցկութիւնը չուտով անց կը կենայ»:

Աշխարհաբար ոտանաւորը, որ արտագրել է Պետերբուրգում Եզնակ Կամարալանի խնդրանքը, բոլորովին աչդի ձևով է գրած եղել 2):

1) Թէև իր յիշատակարաններում չէ յիշում Պետերբուրգ գնալու մասին, սակայն մի ոտանաւորի թուից և տեղից երևում է որ նա 34 թ. Դեկ. 22 գնացել է Պետերբուրգ: Այս մասին վկայում է և պ. Վարդան Աբովեան:

2) Ջանումս ջան չի մնաց, որ իմ անվաճ քեզ ասիմ, Բերանս խօսք չի գալիս, որ իմ խաղն քեզ ասիմ, Թօփ ու թոփխանայ ես սարքել, քանդեցիր բուրճ ու բադանը, Մարի պէս բհամ եկար, կերար, մաշեցիր իմ ջանըս, Դարդիմանդ ես մի ֆիքը արա ինչպէս ըլի ես իմ բանըս, Ոչովիմէն ումուդ չունիմ, դուն ես իմ ճարն ու դարմանըս, Թէ ուզում իս դիֆ ունի մին տան ըլիս իմ սէրն ու սանըս Մար ու քեար տուր էս բանին, որ սկսիմ լաւիցն ասիմ: Ջանում . . . և այլն:

Ոտանաւորի մէջ սէր արծարծելով հանդերձ դրուատում է կանացի գեղեցկութիւնը, ուզում է ինքն իրան արդարացնել որ իւր սէրը սուրբ է և միշտ կարող է շատերին սիրել առանց խորութեան: (Այդ անսակ ոտանաւորները շատ է ունեցել և տուել է պահելու Գանաքեւում մի երիտասարդի):

Արուիկանն առհասարակ շատ է գրադուել կանացի սեռով և միշտ նրանց յախմուր՝ աչքերից ազդուել է: Թէև գերմանուհիներն երբեմն մոռացնել էին տալիս Սրեանու ճալման, աղջկերքը սակայն ընդհանրապէս աւելի է յիշում նրանց ¹⁾:

Արուիկանը նշանակում էր իւր գլխով անցածները, որ ոչ միայն ի նկատի ունէր ուրիշին հաղորդել այլ և «մեր անցկացրած օրերը նշանակել և նրանց համար յատուկ օրադիր սարքել չէ թէ միայն նրա համար է լաւ և օգտակար, որ մենք մեր առաջին ժամանակը վերջինի հետ կարող ենք համեմատել, մեր կենաց, կարգ ու սահման դնել, բախտաւոր էլածին պէս, մեր անցեալ ապագախտութիւն միտք բերել և դժայ աւելի քաղցրութիւնով վայելել մեր կենանք և հակառակ պատահելիս մեզ մխիթարել և հեշտացնել, այլ և էն պատճառաւ, որ մեր միտքը տկար գոյով, շատ բան մոռանումայ, և մենք ինչ որ մեր գլխովն անցակենում չենք կաշող այնպէս ուղիղ յիշել և դատել, ինչպէս հարկնաւ:

Նա իւր գրութիւններին ուրիշ ձև էր տալիս՝ այսինքն գրական և կրթական ²⁾:

¹⁾ «Ի՞նչ մի համարիր, սիրելիս, թէ ես մէկ յատուկ սիրուհի Սրեանումն ունեցել եմ: Բաւ լիցի, ես կանանց իմ մանկութենէ սէր ունէի, և այժմ էլ անչափ ունիմ, այլ ինչպէս սէր, որ ես նրանց տեսնեմ, նրանց սիրուն և չախմուր երեսովը մխիթարուիմ: Մէկ օր նրանցից պակսելիս, սիրտս ուզում ա պատուիլ, բայց հաւատա ինձ թէ էսպիսի արդար սէրը, միմիայն սրտով եմ ուզում, ուրիշ բան ինձ պէտք չի: Թէ ինձ Աստուած օր կը տայ, իս իմ Սրեանու լալման աղջկերանց վայելչութիւնը, ազնուութիւնը, առաքինութիւնը, սիրունութիւնը, միտք ունիմ էսպէս գովելու, թէ կուզ որ աշխարհք էլ չմտնիմ, ես գիտեմ, որ նրանք պարկեշտ են և ամօթխած եմ մէկ պաշ էլայ չեն տալ ինձ, բայց ինձ համար ցաւ չի...: Սերոպայում թագուհիք իրանց փառք են համարում իրանց բանաստեղծի սրտի ուզածը կատարել: Սա գիտեմ, որ մեր ազգը դեռ էտ տեղը չի հասել, էնքան էլ ինձ համար մեծ փառք այ, թէ մեր ազնիւ իսանումները, մեր գեղեցիկ աղջիկները իմ բանը լսեն, ինձ իրանց մտքումը մէկ տեղ տան թէ իրանց սրտումը չեն կամենում:

²⁾ «Նա մանաւանդ հարկաւոր է այս առնել, ինչ ժամանակ մենք օտար աշխարհ եմք դուրս գալիս: Որ ոչինչ պատ-

Նրախտաւորներին, բարեկամներին մէջ եթէ մահուան դէպքեր էր լինում, ինքն իբրեւ զգայուն երիտասարդ շատ անգամ գիշեր ցերեկ տանից չէր դուրս գալիս: Յարուժիւն վարդապետ Ալամարեանի մահը շատ խիստ տրտմեցնում է նրան, երկար ժամերով նա սգում է յանրաժողով մեր ազգի շատ երիտասարդք կորցրին իրանց վիճակը, բախտը: Նա շատերին կարէր լուսաւորիչ լինել, թէև նա իմ աշակերտութեան ժամանակ ինձ դառն աչքով էր մտիկ տալիս և շատ վէրք հասցրեց, բայց և այնպէս մտածելով նրա ջանք, դիտութիւն, ազգասիրութիւն, գործակատարութիւն, սիրտս այրվում էր և փոթոթվում: Նւ յերաւի ժամանակակիցներին համար խորին ցաւի և տխրութեան պատճառ է եղել ալդ արժանաւոր հոգևորականը, այդ հայ անխոնջ մշակը: Նրա եղբերեղբական մահը ամեն տեղ խիստ ազդեցութիւն է թողել, ուր մնաց Արտիանի, որ ամեն մի չնչին դէպքի համար պատրաստ էր արիւն-արցունք թափել: Արտիանը մտածում է, ինչպէս անէ, որ կարողանայ այդ ակնաւոր հայի անունը հռչակել, կամ նրան ծանօթացնէ օտարազգիներին հետ: Այդ ժամանակ Մսեր Մսերեանից մի յօդուած է ստանում, որը և թարգմանելով տալիս է Դորպատում հրատարակուող դերմանական մի լրագրի տպելու: Սակայն Արտիան աւելի ևս ցանկանալով տարածել այդ դառն յիշատակը, դիմեց «Съверная Пчела» թերթի խմբագիր Բոլզարինին (չհացի) և խնդրեց իր մի յօդուածը տպագրել: Նա չէր սպասում թէ կարող է մի խմբագրից ոչ միայն տհաճութիւն և զգուանք այլ և զրպարտութիւն, ամբաստանութիւն տեսնել. երկու անգամ գրնում է նրա մօտ. առաջին անգամ չի ընդունւում պատասխան ընդունելով թէ մօտը հիւր կայ: Արտիանը, որ երկար սպասեց Բոլզարինի տանը և վերջը բացասական պատասխան ստացաւ—այդ միջոցում նա շատ լաւ ուսումնասիրեց դրա ընտանեկան կեանքը, որ այնքան անմխիթար էր, որ ինքը զարմանում էր—արդե՞ք Դորպատումն է ինքը թէ մի ուրիշ տեղ: Միւս օրը գալու նպատակով ուզում է հեռանալ «կեղտոտ» լեհացու տանից, բայց տեսնում է որ չկան իր «վերնակոշիկները», այս կողմը այն կողմն է ընկնում, ոչ ոք չի ուզում տեղն աւել, բոլոր աղախիներն երգում են թէ չեն տեսել: Դուրսը

ճառ չունենալով գրելու, մեզ բաւական նիւթ են վարքը, կացութիւնը, կենցաղավարութիւնը տեղին, որ յետոյ մեր երկրացիքը կարողանան իւրանք իմանալ և ինչ իրանց հաւանելի աւ օգտակար, իրանց համար ժողովել սրանից օրինակ առնուլ: Բայց յայսմանէ անշնորհակալ ու ապերախտ է միշտ էն մարդը, որ այլոց արած լաւութիւնը, մարդասիրութիւնը, ինքը միայն վայելի իւր ընկերաց չի հաղորդի և այնպէս հետզհետէ մըտքիցը քցի:՝

ցելա էր, չէր կարող առանց կրկնակօշիկի դուրս գնալ, ուստի ստիպուած եղաւ յանդիմանելու աղախիններէց մէկին ասելով, թէ ես այստեղից չեմ գնալ և այս բոլէիս տիրոջդ կասեմ: Այդ խօսքի վրայ յանկարծ մի փոքրիկ սենեակի դուռ է բացուած և այնտեղից դուրս են ձգուած նրա կրկնակօշիկները: Սակայն այդ դէպքը նրան չյուսահատացրեց. նա միւս օրն ևս եկաւ: Շատ սպասեցնել տալուց յետոյ երևում է յանկարծ կարճահասակ խմբագիրը, երբ Արտվեանը դուռը բաց էր արել և պատրաստուել էր հեռանալ: Զգացուած և բարկացած երիտասարդը ասում է «ես յայն սակս միայն մնացի աստ, զի ասացից Ձեզ, թէ վարու՛մն ձեր էր անքաղաքավարի յոյժ»: Սև երբ ուզում է հեռանալ, կոպիտ խմբագիրը թոյլ չէ տալիս, հարցնում է նրա մի լինելը: Արտվեանը զայրացած ասում է—ես հոգևորական եմ—: Կարճահասակ լեհացին չարանալով պատասխանում է— հոգևորականի աղբ ես: Նա որ այնքան նեղացած և բարկացած էր միայն անքաղաքավարութեան վրայ—սպասեցնելուն համար, այժմ բոլորովին ծայրահեղութեան է հասնում—գոռում է նրա վերայ և ասում,—ես ցոյց կը տամ ձեր տմարդութիւնը և դուրս է գնում:

Նա չի կարողանում տանել այդ վիրաւորանքը և թագցնել իւր բարեբաւրից: Բարբոտը վիրաւորուած լսելուց յետոյ խորհուրդ է տալիս հեռու կենալ այդ տեսակ տմարդի արարածներէից: Արտվեանը ուզում էր դատաստանի դիմել սակայն բարեբաւրը խորհուրդ տուեց թողնել գանգատը, քանի որ վկայ չունէր և արհամարհել այդ տեսակ մարդկանց:

Նրիտասարդը իւր խնամակալի խորհրդով հետզհետէ մոռացութեան տուեց այդ դէպքը, բայց յանկարծ ինչ է լսում. տմարդի պարոնը դրում է ընկտորին, իբր թէ Արտվեանը ներան սպառնացել է կամ իրեն սպանել փողոցում կամ կնոջ և կամ տունն այրել:

Այս անուր դրպարտութեան համար Բարբոտը կանչում է Արտվեանին և խնդրում է մէկ էլ կրկնել եղելութիւնը, միայն բոլորովին ճշմարիտն ասել, եթէ մինչև անգամ օրէնքը նրան պատժելու լինի. Արտվեանը առանց տատանուելու մի առ մի պատմում է և արտասուում է որ այդ տեսակ մի արարածի հետ դժբաղդութիւն է ունեցել խօսելու:

Նա կանչւում է համալսարանի դատաստանատունը. Բեկտօր Մօյսերն հարց ու փորձ է անում նրան և խնդրում է որ մի քանի խօսք դրէ խմբագրին թէ ես ոչինչ չեմ անելու ձեզ, միամիտ մնացէ՛ք—Արտվեանը պատասխանում է, որ ես մոռացել եմ այդ մասին և մտքումս չկայ նրան որ և է վնաս հասցնել:

Մինչդեռ Արտվեանը պատրաստւում էր պատասխանել խմբագրին, ստանում է իւր հօր մահուան բոթը. երկու դռնութիւնները նրան օրերով սգի մէջ են ձգում և մինչև անգամ անկողին: Սակայն ազնիւ բարեկամները չէին կարող թոյլ տալ

Նրան այնպիսի տրամուլթեան մէջ ընկղմուելու, ուստի ամեն օր ու գիշեր գալիս շրջապատում էին նրա մահճակալը և մխիթարում: Ամեն մէկը իւր դարգացման համապատասխան խօսքերով աշխատում էր հեռացնել տալ նրա այդ անփութարինքի կորուստը. իսկ ինքը մի քանի օրից յետոյ մի ոտանաւորով յայտնում է իւր անցեալ օրերը և իւր հօր ցաւալի մահը: Բարբոտն և իւր ամուսինը կարելի եղած օգնութիւնը չէին զատում իրենց պանդուխտ բարեկամից, իսկ երբ դնում է երկրորդ բարեբարի մօտ «այլ յաւիտեան ոչ մոռացայց զվայրկեանն», այն ինչ զառաջինն տեսի զկինն Փրիդենդերի, հագիւ մտեալ ի տուն նորա, ելանէ նա ընդ առաջ իմ և կախալ զձեռն իմ, արտասուէ դառնագին, պահս ինչ այնպէս ձեռն ի ձեռին, երեսայք նոցա շրջապատէին զմեօք և արտասուօք բարձր ձայնիւ, և ոչ դադարին, մինչև իմ հանգուցեալ սակաւ ինչ ասեմ նոցա, թէ ես այլ ոչ լամ, վասնորոյ և նոցա պարտ է հանդէլի. նսքա գան և մտանեն ի գոգ իմ, և այնպէս նըստեալ առ սեղանով, ջանայ հրեշտակահոգի կինն բանիւք բազմօք սփոփել զսիրտ իմ: Յելանելն իմ նոյնպէս ձեռն տուեալ, նոյն բան խնդրէ. ո՛հ այս ձեռնատուութիւն, այս քաղցրութիւն և կարեկցութիւն իբրև բալասան բօշկեցին սակաւ առ սակաւ զվիշտ իմ¹⁾: Հետզհետէ ամօքում է նրա սիրտը, ներքին թախիծն արդէն արտայայտել էր ճերմակ թևիկի միջոցով:

Գլորւում է և մի տարեշրջան, մօտենում է 36 թ. այն տենչալի ժամանակը, երբ նա պիտի մտնէր իւր հողը. իւր փայփայած աշխարհը. մի կողմից ձգում էր այդ, միւս կողմից զբաղեցնում էին նրան այն հոգսերը, որ շրջապատել էին նրան: Օր ու գիշեր նա մտածում էր իր ապագայի մասին, ամեն ժամ նա իր դժբաղդ հասարակութիւնն է յիշում. նրա դարդերը և հոգսերը մտաբերում և օգնելու զէնքերով զրահաւորւում: Նա այժմ աւելի որոշ գաղափար է կազմում, այժմ բոլորովին իր նպատակն ընդգծում է. և յիրաւի այնպէս ինչպէս մի ժամանակ գերմանական հանճար Շիլլերն էր ասում. «Այսօրուանից հասարակութիւնը կը լինի իմ միակ առարկան, իմ միակ հոգսը, իմ դիտումների իբրը, իմ հաւատարիմ բարեկամը, իմ հրամանատարը: Միայն և միայն հասարակութեան եմ պատկանում այս օրուանից, կը ճանաչեմ միայն նրա դատաստանը և ոչ ուրիշին, միայն նրան կը պատուեմ և այժմ ես վախենում եմ»: Այս գեղեցիկ խօսքերը յետոյ իրականութիւն գտան Աբովեանի բոլոր գործերում:

¹⁾ Այստեղ վերջանում է Աբովեանի յիշատակարանները. ինչպէս երևում է շատերը կորել են. մնացել են 5 տետրակ բառածալ, 10-ը ութածալ և մի 16 ծալ, շատ մանր տառերով գրած:

Նրա աչքում ամեն ինչ հետաքրքրելի է եղել և ուշադրութեան արժանի: Մինչև այսօր նրա հարս տիկին Աբովեանի մօտ բեցեպտներ կան կերակուր եփելու, պաղպաղակ պատրաստելու, որը ցոյց է ապրիս նրա զարմանալի հետախուզութիւնը և մանրակրկիտ լինելը ¹⁾:

Դորպատի կեանքի վերջին մասն, որ յիշուի շատ հետաքրքիր պիտի լինէր, գժրադպարար չկայ: Միայն մի այբօմ կայ, որտեղից կարելի է իմանալ թէ ինչպիսի ցաւակցութիւններ են ցոյց տուել նրա մտերիմ բարեկամները Աբովեանի հեռանալու ժամանակ: Այն երիտասարդը, որ այնքան հիանալի ընդունելութիւններ էր դնում, այնպիսի ընդհանուր համակրութիւն էր գրաւել, բոլորի սրտում տեղ ունէր բռնած. այժմ պիտի հեռանար, պիտի թողնէր իւր սիրելիներին, իւր փայփայած արարածներին. Լօտէն և Յուլիէն այլ ևս իրանց քաղցր հայեացքները, ջերմ համբայրները չպիտի չռայէին. նա գրկուում էր ներանցից և ոչ միայն օրիորդներն էին, որ այնքան կաշկանդել էին նրան, այլ և այն ամեն բարի անձինք, որոնք սերտ սիրել էին, որոնք հոգով սրտով կապուած էին նրա հետ:

Բոլոր բարեկամներն իրանց սրտագին բարեմաղթութիւններն էին անում: Իւրաքանչիւրն իւր կողմից մի նուէր էր տալիս Աբովեանին իբրև յիշատակ: Նուէրը ոչ թէ ոսկի կամ արծաթ էր, այլ մի կտոր թուղթ՝ վերան արձանագրուած տուղթի իղձերն ու փափագները: (Դրանցից մօտ 40 հատ մինչև այժմ պահուած են պ. Վ. Աբովեանի մօտ): Նուէրել էին և թղթէ գեղեցիկ ծաղիկներ, որոնք գեղեցկութեամբ և նրբութեամբ մարդու զարմացնում են: Բոլորն ընդհանրապէս ներկայացնում են զանազան մագիկներ, ձևակերպելով իրանց մէջ հաւատ, յոյս, սէր արտայայտող նշանները:

Թէ ոսկէկողք քառանկիւնի թղթերը և թէ ծաղիկները ջերմ բարեկամութեան արգասիք էին ի հարկէ: Իւրաքանչիւրն աշխատել էր իւր սիրտը մի քանի տողով հասկացնել, իր բարեմաղթութիւնները մի քանի շարք գրութեամբ յաւերժացնել. ամեն մէկն ըստ իր ճաշակի ընտրել էր զանազան կտորներ Ս. գրքից, կամ հեղինակներից և կամ ինքն էր շարադրել: ²⁾

¹⁾ Ի կամիւր ունել յամռան զսառն ըմպելիս, կարելի է երկու եղանակաւ պատրաստել զայս: Ի փորեալ յերկրի զխոր մի և պատեալ կաւով յամենայն կողմանէ որպէս կճուռ մի լըցեալ ջրով և փակեալ զբերան կամ բարակ կաւեայ խփով. կամ երկաթեայ և վառեալ ի վերայ նորա հուր յեղանել զուրբշեաց ի նմանէ սառնանայ ջուրն...:

²⁾ Վենդենփելդից: Ճեղքից զբանս իմ ի բերան Գո. և ընդ հովանեաւ ձեռին իմոյ ծածկեցից զքեզ. որով կանգնեցի զեր-

Ազնիւ բարերարը շատ է ցաւում, որ իւր թանկագին բա-
րեկամը պիտի հեռանայ: Ուսման շրջանը բոլորել էր և նա
վերադառնում էր հայրենիք իւր ազգի խոր վէրքերին սպեղա-
նի դնելու: Կթէ մի մխիթարութիւն կար նրա սրտագին բարե-
կամներին, այս զգացմունքն էր:

36 Թ. փետրուար ամսին Արուսեանը թողեց իւր սիրած
և պաշտած մարդկանց. ջերմ համբոյրները բարի ճանապարհ
ասացին և նա արտասուակից աչքերով թողեց իւր երախտա-
ւորներին, իւր սրտի հեռատու անկիւններում անջնջելի կերպով
դրոշմելով նոցա յիշատակը և հոգով սրտով ցանկացաւ որ մենք
էլ իմանանք այդ բանը, «Թէ ճշմարիտ ողջան բարիք, սիրա-
շահութիւնք, խնամարկութիւնք իմ Դորպատ մտածին պէս մին-
չև այսօր վայելեցի չեմ կարող պատմել: Թէ ուրիշ բանով չկա-
րողանամ վարձատրուող լինել, բոլոր արարմունքին ազնիւ
գերմասցւոցս, այսքանն ինձ բաւական մխիթարութիւն կը լի-
նի, որ յետոյ զգամ, Թէ ես նրանց արածը չի մոռացայ, գոնէ
իմ ազգին յայտնեցի»:

«Բայց ես իմ դերմանացի բարեկամներին և բարերարներին
անչափ պարտական լինելով, հարկ կայ ինձ, որ նրանց անունը
ընտանիքը, բազի բազի լաւ առանձին և յատուկ գրեմ ձըշ-
մարիտ էապէս գիտուն, բարեհոգի, բանիբուն անձանց կեան-
քը, արարք, դատողութիւն, խօսակցութիւն, ճշգրիտ հայելի են
կենաց ամեն մարդու»:

Այսպիսի զգացմունքներով, ծանր տպաւորութիւններ
տակ հեռացաւ Դորպատից: Արդեօք Արուսեանը վերջացրեց իր
ուսումը. կամ քննութիւն տուեց մի որեկից՝ բաժնի. ոչինչ յի-
շատակութիւն չկայ. ըստ Պ. Նրիցհանի նա չէ աւարտել իւր
ուսումը:

«Արուսեանի ուսումնասիրութեան հասակն անցած էր և
դժուար էր ամենևին փոխարինել իւր կորուստը, բայց պիտոյ
է ասել, Թէ նրա սարուայ կեցութիւնը, ուսումը և նկա
տողութիւնները դորպատեան գիտուն և բարեմիտ մարդերի մէջ
մի նոր իմացական մկրտութեան աւազան դարձաւ նրա հոգու
համար, և վերստին ծնաւ նրան: Այն ընդհանուր կրթութիւնը,
այն ազգասիրական հոգին, այն անօրինակ սէրը դէպի հայոց
մանկունքը, այն առաքինի հոգին, որ նա դուրս տարաւ իր

կրնս, և արկի հիմունս երկրի և ասացի ցՍիօն ժողովուրդ իմ
ես դուս. (Սս. ԾԱ. 16):

Թող ոյժ տան ձեզ այս խօսքերը: Տիրոջ խօսքերով նրա
սրբազան ստեղծագործութիւնը մնաց, որով իւր մահով և յա-
րութիւն առնելով կնքեց. որոնց հետ և ես միանում եմ և մը-
նում եմ ընդ միշտ բարեացակամ:

(Բոլորը գերմաներէն է գրուած,:

հետ Դորպատից, 1836-ին վերադառնալով դէպի Հայաստան մի այնպիսի վաստակ էր, որ կարող էր միայն վաստակել Արդիւեանի պէս ազնիւ տղամարդը: Ուսումնական բազմահայեաց կրթութիւն չստացաւ նա Դորպատումը, բայց ուսաւ ճանաչել իւր անձը, սիրել իւր ազգը և աշխատել նորա զաւակներին կրթութեան վերայ, որպէս քաջ դաստիարակ, որպէս սիրող ուսուցիչ, որպէս քաղցր խնամարկու հայր բարեկամ իւր աշակերտներին համար (Հիւսիս. ՝ № 2):

Ս. Նազարեանի հայեացքը սխալ չէր. քանի որ Արդիւեանին պիտի տեսնենք յիրաւի որպէս «քաջ դաստիարակ», «սիրող ուսուցիչ»:

ժ.

Արդիւեանի վերադարձը:

Դորպատից պիտի դառնար Պետերբուրգի վրայով. մայրաքաղաքը, որ մի ժամանակ միայն արտաքինով էր շլացրել նրան, այժմ պատկերացաւ նրան և իւր ներքին կեանքով: Նա այցելեց իւր բարեկամներին, ծանօթներին, խօսեց իւր ուսման մասին թէ ինչպէս պիտի գործէ հայրենի երկրի փշոտ ասպարիզում: Ամենքն ուրախ էին տեսնելով բարի զգացմունքներով տոգորուած հայ երիտասարդին: Դրանք ևս իրենց կողմից շուայում էին բարեմաղթութիւններ և յաջողութիւն մաղթում: Այլոք ստուարանում է սրանց իղձերի արձանագրութեամբ:

Արդիւեանով հետաքրքրում էին ոչ միայն Դորպատում, այլ և շատ տեղեր: Պետերբուրգում արդէն լսել էին նրա մասին դեռ ուսանող ժամանակ: Ռուսաց Կայսրուհի Ալեքսանդրա Ֆեօդորովնան լսած էր արդէն նրա մասին, ուստի կանչել է տալիս նրան իւր մօտ, խօսում է նրա հետ, նրա ապագայ գործունէութեան մասին: Թագուհին սիրալիր ընդունելութեամբ անմոռաց է մնում Արդիւեանի յիշողութիւնից: Եւ յիրաւի մեծ երջանկութիւն էր մի լայնածաւալ պետութեան կայսրուհոյց այդ տեսակ ընդունելութիւն գտնել: Կայսրուհին առաջարկում է լինել Պետերբուրգի հնագիտական ընկերութեան անդամ, որի համար տալիս է Արդիւեանին մի փառաւոր ոսկէսառ զրկայագիր (Վ. Արդ. տեսել է այդ մեծ թուղթը, սակայն այժմ չկայ—կորել է): Այդ վկայագիրը նրա վերայ պարտականութիւն էր դնում թղթակցել Կովկասից տեղական զանազան հրճութիւնների մասին: Թագուհին յայտնում է իւր համակրութիւնը դէպի Արդիւեան, որ նա ամեն տեսակ նեղութիւնների հանդիպելով կարողացել է գալ Հիւսիս և բարձրագոյն ուսում ստանալ: Յայտնում է և իւր յարգանքը դէպի հայ ազգը, որ ընդունակ է կեանքի բոլոր ասպարէզներում մեծ դեր խաղալ:

Գեղեցիկ տպաւորութիւնների տակ հեռանում է կայսրուհոյց. ապա ներկայանում է լուսաւորութեան նախարարին:

խօսում է իր մասին, շնորհակալութիւն է յայտնում որ պետութիւնն իրեն օգնել է. (պ. Վարդան Արտիման) և մի առ ժամանակ Պետերբուրգում մնալուց յետոյ՝ հեռանում է դէպ Մոսկուա:

Մոսկուայում առաջին անգամ Արտիմանը իրեն թոյլ տուաւ հասարակութեան մէջ դուրս գալ և խօսել. Ս. Յարութեան տօնին դուրս է գալիս բեմ և հիանալի քարոզ խօսում: Գարոգի բովանդակութիւնը մինչև վերջին ժամանակներս մընում է եղել: Լսողներին մի քանիսը շատ գեղեցիկ գոյներով են նկարագրել պ. Վ. Արտիմանին:

Մոսկուայումն էլ նա ունէր շատ ծանօթներ, հայ, ռուս թէ գերմանացի. բոլորին այցելութեան է գնում և մեծ ընդունելութիւն գտնում: Նոյնպիսի նուէրներ ստանում է և այնտեղ. ապա թողնում է բարեկամներին և վերադառնում է Ն. Նախիջևան:

Այս քաղաքը շատ սիրտ կապուած էր Արտիմանի վշտերի հետ. յայտնեղ էր սպանուել և թաղուել իւր ուսուցիչ Ալամդարեան վարդապետը: Մտնելով քաղաքն, առաջին պարտականութիւնն է համարում իմանալ նորա գերեզմանի տեղը և երբ տեղեկանում է՝ զգացուած սրտով, դառն ախրութեան մէջ ընկղմուած վազում է գերեզմանը, շոքում և համբուրում, աւտասուքներով թրջում է կացնամահով սպանուած հայ հոգևորականի սառն շիրիմը:

Բաւական բազմութիւն են հաւաքում նրա մօտ. նա իւր կսկիծը դրոշմել էր թղթի վերայ ոտանաւորի միջոցով, որ հանում է և կարդում. ամենքը սարսուռ են, տեսնելով ուսուցչի և աշակերտի անհուն սէրը: (Այս ոտանաւորը ես չկարողացայ ձեռք բերել. ըստ Վ. Արտիմանի կորած չէ):

Ապա թողնում է և իւր սիրելի շիրիմ ամփոփող քաղաքը և վերադառնում է Տփլիս վսեմ նպատակներով՝ լինել դաստիարակ և ուսուցիչ իւր ազգի խաւարի մէջ թաղուած գաւաղներին:

Բայց հրքան խաբուեց նա, երբ հանդիպեց սարսափելի խոչնդոտների. նրա վարվուռն յոյսերը իրականութիւն չգտան. հայութեան կեդրոնը չընդունեց, հայը չճանաչեց իւր արժանաւոր ուսուցչին, իւր մեծ մարդուն: Նրա հոգեկան բարձր արժանաւորութիւնները, անյագ եռանդը խութերի հանդիպեց: Որ կողմը նայեց փուշ և տատաօկ, որ կողմը մտիկ տուեց թուփ և մացառ, ամեն տեղ կոպտութիւն, միջնադարեան բերտութիւն:

«Այլասէր դաւանութեանց» նախարարը յանձնարարութիւն էր տուել Արտիմանի մասին Յովհաննէս Վարբեցի կաթողիկոսին: Դրուատել էր նրան, ցոյց էր տուել նրա արժանաւորութիւնները և իր ուրախութիւնը յայտնել, թէ ինչպէս մի հայ բազմակողմանի զարգացած, օժտուած նեեկայ գիտութեան պտուղներով, Հայաստանը ուղբ է դնում:

Արովկանը շտապեց էջմիածին: Ճանապարհը, որ այնքան տարիներէն յետոյ այնքան պանդխտութիւնէն յետոյ տանում էր նորան դէպ իւր աշխարհը, հայրենիքը՝ որտեղ օդ էր ծծել, որտեղ մեծացել էր, դրախտ էր թւում նրան: Մնողական զրգուանքն, ընտանիքի գորովը շատ չպահեցին նրան. նա թողեց այդ բոլորը, այլ գործով ոգևորուած լինելով դնաց էջմիածին, ներկայացաւ կաթողիկոսին յիշեց նախարարի խօսքը, յիշեց իւր բարերարները և աւանդը Մայր Աթոռում մեծամեծ դպրոց հաստատել: Արովկանի բոլոր իղձն էր իւր նախամայր եկեղեցու ծոցում, իւր կրթութեան օրօրանում լուսոյ շտեմարան հաստատել: Նա պարտական էր այդ վայրին, քանի որ այդտեղ էր դաստիարակուել և կեանք վարել: այդտեղ էր առաջին անգամ զգացել ազգասիրական տոյրոզ կրակը և կամ իբրեւ հայութեան սիրտ այդտեղ պիտի գործէր:

Մեւելային թմրութիւնը թաղաւորում էր վանքում, արեւմտեան լուսաւոր հոսանքը Կովկասեան լեռներին դէմ էր ընկել: Արովկանը բորբոքուած, վեհ նպատակներին սիրտն ու միտքը գերի տուած մասւ էջմիածին դպրոց հաստատելու, երոպական կրթութիւն մտցնելու, քահանայացուներ և ուսուցիչներ պատրաստելու փափագով:

Նա բւրեւնել էր սեւազգեստ դասի բարձր կոչումը. նա համոզուած էր, որ հայի փրկութեան գրօշակը միայն նրա ձեռքին է ծածանում և ոչ մի ուրիշի, որի համար նուիրել էր և իրան:

Մի կողմից նրա հօր կորուստը, միւս կողմից հայի խաւար դրութիւնը թաղեցին նրան իշտի ուղիւնոսի մէջ. սակայն պայծառ իդէալը միշտ լուսաւոր փարոսի նման փայլել է նրա աչքի առջև:

Նա կաթողիկոսին դիմելով հաւատացած էր որ գրկաբաց կընդունուի և միջոց կը տրուի իւր սրտի գեղուն զգացումները էջմիածնի ծոցում հայ երիտասարդների սրտերում սփռելու: Սակայն բոլոր յոյսերի փոխարէն ինչ տեսաւ, հայոց եկեղեցւոյ գահակալը տգէտ վեղարաւորների անլուր զրպարտութիւններին ունկնդրած, ընդունեց իբրեւ հայրենատեաց, արիւնազանց, ազգամոռաց, կրօնադրուժ՝ և այս հիման վերայ յոխորտալով գոռաց «հրամանաւ գաս ի վերայ իմ, վտարանդեալդ ի հաւատոյ, դու լաւ խմորել կարես զմիտս անմեղաց, այլ կրթել զնոսալէ քո՞ գործ»:

Կաթողիկոսից հալածուած, բեկուած յոյսերով թողեց նա իւր հայրենի երկիրը, Արարատեան աշխարհը անհուն տխրութեան մէջ ընկղմուած և հեռացաւ Տփլիսի¹⁾:

¹⁾ (Ըստ Պ. Նրեցեանի Յովհաննէս կաթողիկոսն այդ ժամանակ Թիֆլիս էր. այնպէս որ Արովկանը հէնց այդտեղ դիմեց:

ԺԱ.

Արժանի դործունէութիւնը Թիֆլիսում:

Վանքի բակի մի խցում սկսեց նա իւր գործունէութիւնը, առաջին անգամ փորձ փորձեց փշոտ ասպարէզ ոտք դնել այդ նեղ սենեակում, ուր սկսեց աշակերտներ ժողովելով՝ դաս տալ նոցա և ուսուցչացունելը պատրաստել:

«Ձամ մի և կէս մնացի ի Տիֆլիս»՝ յետ վերադարձի իմոյ Սերոպիայ կարօտ և աւուրն պարենի: Զարքունական ծառայութիւն յամենայն ընդէի առաջագրէին ինձ, այլ իմ իղձ ու նըպատակ էր ոչ թողուլ գհոգևորական կոչումն իմ: Հուսկ ուրեմն և Սենադոր Գանն, որ իբրև գորդի սերէր, միջնորդ եղև անձամբ անձին ընդունել զիս ի դասս կղերիկոսաց կրկին, այլ լուսահողին լուսեբրական համարելով զիս՝ ոչ յարգեաց և զխնդիր այնպիսի երևելի անձինս:

Վեհին. «Վեհը ընդունակ մարդիկ էր որոնում ապագայ բացուելիք սինդի մէջ պաշտօններ վարելու համար. Կաթողիկոսը ի թիւս այլոց աչքի առաջ ունէր նաև համալսարանական ուսումն առած և լեզուներ գիտցող Արժանցին, որ տակաւին չէր հանուած հոգևորական դասակարգի ցուցակից: Ըստ հրաւիրանաց վեհի Արժանցը խոստանում է գնալ Էջմիածին կամ սինդում Թարգմանի պաշտօն վարելու և կամ վարժարանում ուսուցչութիւն անելու: Նոյն 1836 թ. սեպտեմբերին կաթողիկոսը Թիֆլիսից ուղևորում է Էջմիածին, պատուիրելով թեմիս առաջնորդական պաշտօն կատարող Արղութեանց Ստեփաննոս արքեպիսկոպոսին՝ միջոց տալ Արժանցին գնալու սուրբ Աթոռ: Սակայն ամիսներ են անցնում և վեհն իզուր է սպասում նորան:

Մի կոնդակում առ յիշեալ Արղութեանց Ստեփան արքեպիսկոպոսը 37 թ.-ի յունուարի 25-ին գրում է:

«Մեք ի վերադառնալ մերում այդքէն ակն ունէաք թէ տիրացու Խաչատուրն Արժանց զկնի դոյզն ինչ միջոցի ունի գալ յաթոռս ըստ իւրեան խոստման, այլ զկնի այնորիկ ոչ ի նմանէ, և ոչ ի ձէնջ վասն նորա շընկալաք տեղեկութիւն ինչ, այլ այժմ բարեհաճութեամբ մերով գրեաց նմա Թօմայ Յովսէփիչն Դօրղանեանց պրօկուրօրն սրբազան սինհոդոսի, զի նա եկեցեցէ այս յաղագս պիտանաւորութեան Աթոռոյս»։ «Արձագանք» 94 թ. 123:

Գլխաւոր պատճառներ էր, որ հայրենեաց սիրով վառուած՝ տաք գլուխ երիտասարդ Արժանցը կարբեցւոյ ժամանակ չկամեցաւ երթալ Էջմիածին և կատարել իւր կուսակրօն դառնալու ուխտը: Նոյնտեղ:

Արքիեանի սիրտը կրկին և կրկին մորմառում է. նա ինչ յոյսերով էր եկել և այժմ ինչ է տեսնում. Ամեն կողմից պատնէշներ են կանգնած, տգիտութիւնը չինական պարիսպներ էր քաշել Արքիեանի առջև: Հայ հոգեւորականութիւնը իբրև մոլորուածի, իբրև վտանգաւոր հայի էր նայում նորա վերայ, որ այնքան սրտով սիրում էր իւր ազգը, իւր եկեղեցին: Ուստի և երկու նշանաւոր մարդկանց միջնորդութիւններն իզուր անցան:

Սև ինչ աւելի վերաւորական կարող էր լինել երկուստեք Արքիեանի համար, քան այն, որ նրան լուսեւրական էին համարում, գրկում էին ասպարէզից նրան՝ որից կախուած էր մի ահագին սերնդի յառաջագիմութիւն: Կաշկանդեկ նրա բոլոր ցանկութիւնները, որոնք դէպի բարին էին ուղղուած, կասկածել Արքիեանի վրայ իբրև բողոքական դերմանացիների մէջ ուսում առածի վրայ, չընդունել նրա հեղինակութիւնը իբրև օտարադաւան ժողովրդի մէջ կրթուած մի մարդու՝ առ նուազն ստոր կրքերի, չարանենդ խարդաւանանքների ծաւալումն է:

Վանքի խուցն անբաւական եղաւ նրա անյագ եւանդիկն յագուրդ տալու, միւս կողմից յուսարեկ Արքիեանը անթիւ խոչընդոտներ տեսնելով, անհամար կրքերի բորբոքում շօշափելով ստիպուած «ի չքաւորութենէ մտի ի պաշտօն արքունական դուռն ոչ երբէք կամէի»: 12 դեկ. 1837 թ. ընդունուեց իբրև ուսուցիչ և տեսուչ Թիֆլիսի նահանգական դպրոցում:

Արքիեանը չէ բաւականանում միայն ուսուցչի և տեսչի պաշտօն կատարելով. նրա անսահման եռանդը, վառ և բորբոք դգացմունքներն ընդարձակ չրջան է որոնում:

Նա լաւ ըմբռնել էր նշանաւոր խօսքի իմաստը. որում շատ տուաւ գիտութեան իմաստ, շատ խնդրեցիք ի նմանէ առաքինութեան տեսակ. կամ ինչպէս ինքն է ասում «շատ առնողից շատ կը սլահանջեն» (Վ. Հ. 76): Ուստի և նա բանում է Թիֆլիսում մասնաւոր պանսիօն, ուր ընդունում է թէ հայ և թէ վրացի երեխաներ և այնքան գեղեցիկ պարապում է այդ մանուկ սրտերի հետ, որ Վանքերն յափշտակուած ասում է. «Այս դպրոցը շատ անգամ գացի ու հայ տղոց յառաջագիմութեանը վրայ շատ զարմացայ: Տասը տասն ու չորս տարեւան տղաք աղեկ կը կարդան ու կը գրեն հայերէն, վրացերէն, թաթարերէն, ռուսերէն, գերմաներէն ու գաղիերէն: Ստուգիւ շատ զարմացայ, գերմաներէն աղեկ չնշտելով կը խօսէին ու վարպետին իմ առջև գրել տուած բաներէն տեսայ որ գերմաներէն լեզուի և կազմութեան աղեկ տեղեակ էին, իմ առջև Կեթէին ու Շիլլերին գործերը կարդային: Ամեն անգամ աս դպրոցը գալուս ու այս կայտառ տղաքը տեսնելուս մեծ ուրախութիւն կը զգայի, մանաւանդ բարեկամական ու ընտանեկան վարմունքը, քաղաքավարութիւնն ու վարժութիւնը զիս շատ կուրախացնէր: Իրենց վարպետին վրայ շատ սէր ունին, որովհետև թէ կրթութեան ու գիտութեան մէջ յառաջացնելու

և թէ իրենց հանգստութեանը շատ փոյթ կը տանին:

Այսպիսի բարեկարգ դրութեան մէջ էր ուսումնարանն, երբ ընդունեց Վահանի առաջարկութիւնը զնալ նրա հետ և ցոյց տալ Հայաստանի հնութիւնները, նշանաւոր տեղերը, Նրա սաներն այնքան սիրում էին իրեն, որ մինչև անգամ պատ-
րաստ էին հետը գնալ- եթէ թոյլ տար. բայց և այնպէս գնում ուղեկցում են բաւական տեղ: Պ. Աբովեանին հետ մէկ տեղ թիֆլիզէն ելաւ: Իր բոլոր աշակերտները ձիերով քաղքէն դուրս մեզի յուղարկաւոր եկած էին: Այս աշխոյժ երիտասարդներուն տեսքը նորէն ինծի ուրախութիւն բերաւ, որոնք անանկ վար-
ժութեամբ ձիերնին կը դարձնէին կը խաղցնէին, որ մարդ չի կրնար կարծել: Կուր գետին քով վերջին պարտէզներուն հա-
սանք նէ՝ աս մեր յուղարկաւորներէն հրաժարեցանք. պ. Աբովեան իր աշակերտներուն գերմաներէն լեզուաւ խօսակցու-
թիւն մընկալով՝ յորդորեց որ ուսման փոյթ տանին, որ դառ-
նալու ատեն ինքն ալ ուրախանայ: Մէկիկ մէկիկ գնանուն
ձեռքը թոթովէն ետքը, բարեմաղթութեան ձայները բարձ-
րացան, որոնք մեր ետեւէն երկայն ատեն կը լսուէին՝ (ձա-
նալ. ի Հայս. Վահան):

Աբովեանը ուղեկցեց Վահանին, ցոյց տուաւ Հայաստա-
նի կեդրոնը, Եւփրատինը, Արարատը, Ժանօթացը Ժողովրդի
կեանքի հետ: Սերոպացու ուշքն ու միտքը կապեց հայրենի աշ-
խարհի անցեալ փառքի հետ և ազա դարձաւ թիֆլիզ:

Նուիրուած իւր դործին՝ առաջ էր առնում մատաղ սե-
րընդի յառաջագիմութեան դրօշակը: Այնպիսի դաստիարակու-
թիւն և կրթութիւն տուեց, որ Կովկասն առաջ չէր տեսել:
Նա ոչ միայն իբրև հայ հայութեան ոգի մտցրեց, այլ և իբրև
մանկավարժ առաջին անգամ սովորեցրեց հեշտ և դիւրին միջո-
ցով հնչական մեթոդով (ըստ ոմանց իբրև թէ ուսուց մէջ էլ
Աբով. մտցրեց):

Իւր աշակերտներին մասնակից էր անում ամեն տեսակ
հանդէսների: Թիֆլիսում յաճախ կրօնական հանդէսներ, սրբե-
րի տօնախմբութիւններ էր տեղի ունենում. իբրև ջերմեռանդ
հայ նա միշտ իւր աշակերտների հետ լինում էր այդ տեղերում.
նախօրօք խօսում էր հանդէսների կրթական նշանակութեան
վրայ. աշակերտները սիրով լսում էին: Այդպիսի ուրախ բոլե-
ներն երբեմն ազդում էին Աբովեանի վրայ, ուստի իւր ներքին
յոյգերը յայտնում էր ոտանաւորների միջոցով:

Օրինակ. Առ Հանդէս ուխտի ի սուրբ լեռն Մթայ-
Մմինդայ:

«Յայս տեսարան հոգեզուարճ
Յապչեալ նստեմ ձեռն ի ծնոտի.
Ջքեզ խնդրեմ վշտահալած
Ջքեզ իմ կենաց լոյս անձկալի»:

Այսպիսի տրամադրութեամբ էր հանդիպում տօնախմբու-

Թիւններին և միշտ որոնում էր Վեր կենաց լոյսին: Նրկար ժամանակ նա անհանգիստ չեղաւ շուտով «անձկալին» երևում է և նա գտաւ դրան:

39 Թուականն Արուիկանի վերջնական սիրահարական թուականն է. այս անգամ միանգամ ընդ միշտ սիրեց մէկին՝ մոռանալով երիտասարդական սիրուհիներին—Յուլիային, Լօտէին:

Թիֆլիզի գերմանացւոյ դաղթավայրում ապրում էր գերնեւալ Կոցիբուն իւր կնոջ հետ, որոնց հետ էր և Իէվել քաղաքից հարուստ ծնողների գաւակ 20 տարեկան գերմանուհի օրիորդ Էմիլիայն ¹⁾:

Արուիկանը ծանօթանում է գերնեւալ Կոցիբոյի հետ. «Դիպուածով թէ գերմանացիների հետ մօտ լինելու յարգելի պատճառաւ նա բնակութիւն է կոչել «նեմեցի կօլօնիա» կոչուած թաղումը, ինչպէս երևում է այստեղ է ծանօթացել իւր գերմանուհի կնոջ հետ և ամուսնացել» (վիպասան մեծ. պ. Պերն Պաօչեանցի ինձ ուղղած նամակից):

Ըստ դատեր Արուիկանի «Գերնեւալը մի անգամ ճաշի է հրաւիրում հօրս որտեղ լինում է և մայրս»²⁾ Շատ դիւր է գալիս օրիորդը մանաւանդ որ նա շատ էր յարգում այդ աղջկն: Նրկարի, երրորդ անգամ առանց հրաւիրելու գնում է. գերնեւալի ամուսինը մի անգամ նկատում է մօրս թէ Արուիկանին դիւր ետ եկել ³⁾:

Նրկու կողմից յարգանքը հետզհետէ զօրանալով վերջապէս Արուիկանն առաջարկութիւն արեց և ընդունուեց, «1838 թ. սեպտեմբերի 8-ին «տիրացու» Խաչատուրը պաշտօնապէս

¹⁾ Օր. Էմիլիայն շատ շուտով զրկւում է ծնողներից և ամբողջ կարողութիւնից. նրա խնամակալութիւնը վերցնում է իրեն վերայ գերնեւալ Կոցիբուն որ այդ ժամանակները պաշտօնով պիտի տեղակոխուէր Թիֆլիզի Այդ մասին առաջարկում է օր. Էմիլիային, որ սկզբում բացէ ի բաց մերժում է առարկելով թէ Կովկաս չեմ կարող գալ—ասում են—այնտեղ մարդիկ չեն այլ գէլեր: Վերջը համաձայնում է և գալիս: (Դուստր Արուիկանի տիկին Զարմանդուխտ Բաթեակի):

²⁾ Պ. Ներցեան այսպէս է պատմում. «Թիֆլիզի գերմանացոց կօլօնիայում մի փոքրիկ տան մէջ բնակւում էր Բրիտանիան (Կարլովիչ) Շէպֆի անունով մի գերմանացի, դա ուսուցչութեան պաշտօնով նոր էր եկել այստեղ Լէվել քաղաքից և հետը բերել էր իւր մատաղահաս կնոջն ու սորա քոյր թէ ագգական՝ օրիորդ Էմիլիային: Ծանօթանալով իւր պաշտօնակից Շէպֆի ընտանեաց հետ և յաճախակի այցելելով նոցա տունը, մօտ 27 տարեկան (նշ թէ 27 այլ 33 տարեկան) Արուիկանը սիրահարուեց օրիորդ Էմիլիայի վրայ: «Արձագ. № 123):

նշան տուեց Ռէվէլցի օրերող Էմիլիային, խոստանալով պսակուել, երբ միայն արձակում կը ստանայ հոգևոր կոչումից՝:

Այս պատճառով 38 թ. դեկտեմբերի 15-ին Արքեպիսկոպոսի պալատին մի թղթով, որով խնդրում էր արձակում, բայց իւր ժողովարարական արտոնութեանց առաւելութեան համար Արքեպիսկոպոսի առաջարկում էր սինոդին լերկու ամօք նուստրով և թուով յառաջ տալ վկայական հոգևոր կոչումից ազատ կացուցանելու մասին, բայց սինոդը մերժեց այդ ապօրինի պահանջը և Արքեպիսկոպոսի ստացաւ ուղած վկայականը 1839 թուի ամառը (Պատճէնը տես վերջում):

«Այնուամենայնիւ մտածել պտակուելու մասին: Սակայն նախ քան այդ անվերադառնալի քայլ անելը, Արքեպիսկոպոսի օրերող Էմիլիան հարկ համարեցին՝ ապագայ տարակուսանքներէն իւրեանց ազատ պահելու համար պաշտօնապէս մի դաշնագրութիւն կազմել իւրեանց մէջ, որի օրինակը ստորև յառաջ է բերուած. ինչպէս երևում է, Արքեպիսկոպոսի վախ էր զգում և աշխատում էր այդ դաշնագրութեամբ ապահովացնել իւրեան, որ չլինի թէ մի օր իւր սիրելի ամուսինը առաջը դնելով Աւետարանի խօսքերը՝ թողցէ այդ զհայր և զմայր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ՝ պահանջէր հայրենասէր Խաչատուրից թողնել ընդ միշտ Կովկասը և տեղափոխուել Ռէվէլ, ուր, կարծեմ, մի փոքրիկ կալուած էլ ունէր օրերողը: Այնուհետև ամուսինները որոշում են չդիպչել միմեանց կրօնական համոզմանցը, այն պայմանաւ միայն, որ պսակը կատարուի հայոց եկեղեցում և որդիքը մկրտուին և կրթութիւն ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ:

Ահա այդ դաշնագրութիւնը, որ կայացաւ Արքեպիսկոպոսի ամուսինների մէջ 1839 թուի օգոստոսի 6-ին, պսակից գրեթէ մէկ ու կէս ամիս առաջ. Դա գրուած է մէկ ուղղակիանոց գրուածաւոր թղթի վրայ՝ ձախ կողմը գերմաներէն, աջ կողմը հայերէն՝:

Դ ա շ ն .

«Մեք ի ներքոյ ստորագրեալքս, հայագրէ Խաչատուրն Աւետիքեան Ապովեան, վերատեսուչ նահանգական (գաւառական) արքունի վարժարանին Տփլիսայ. և գերմանացի Էմիլիա Լօզէ, նշանադրեալ գտով ընդ միմեանս ըստ հաճութեանս երկոցունց յ8-ն սեպտեմբերի 1838 ամի, այժմ կամելով սուրբ պսակաւ միաւորել ընդ միմեանս, զնեմք ի միջի մերում զայս դաշն. նախ զի ես Էմիլիայս չունիմ զորպիսի և իցէ անշարժ կալուածս ի հայրենիս իմ ի Ռէվէլ քաղաքի, որք կարասցեն յապայն պատճառ լինել ստիպելոյ զայրն իմ թողուլ գտեղի ծառայութեան իւրոյ և զալ ընդիս ի հայրենիս իմ: Սրկորդ՝ զի պսակն մեր եղիցի յեկեղեցւոյ Հայոց և ի ձեռն հայ քահանայի ըստ ծիսի արարողութեան իւր եկեղեցւոյ. Սրկորդ՝ զի որդիք ծնեալք յամուսնութենէ մերմէ՝ թէ արուք և թէ էգբ մկրտես-

ցին ի նոյն եկեղեցւոյ Հայոց ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ և սնցին յուսումն ճշմարիտ կրօնի նոցա, այնպէս զի և թէ մահ անգամ հանդիպեսցի առն իմոյ, զորդիս մնացեալս ի նմանէ ոչինչ իւրք իրաւամբք կամ համոզանօք կարացից չըջնլ ի հայրենի դաւանութիւն իմ. նոյնպէս և ես խաչատուր Ապովեանս յոչինչ դէպս կարացից բռնադատել կամ համոզել զկին իմ թողուլ իւր հայրենի դաւանութիւն, այլ համարձակ պաշտեսցէ զկրօն իւր որպէս մինչև ցայժմ: Վասն որոյ մեք երկուքին ամուսինքս զրեալ զայս դաշն ի վերայ արքունի գրուագաւոր ռուբլիանոց թղթոյ և ստորագրեալ մերումս իսկ հաճութեամբ և իսկական ստորագրութեամբ ի ներկայութեան ստորագրեալ անձանց մատուցաք, ուր հարկն է, ի 6 օգոստոսի 1839 ամի, ի քաղաք Տիփլիս. կառավարիչ նահանգական ուսումնարանի Տիփլիսայ խաչատուր Ապովեան

Emilie Loose

Այս դաշնագրութեան վերահասու և վկայ եմք՝ տիտուլար-եկի սովետնիկ Առաքել Արարատեան, Գարբիէլ Նրեստիսեանց. S. D. Schopf (Միւս գերմանացի վկայի ազգը չէ կարգացում): Արձագ. 123.

Դաշնագրութիւնը ստորագրելուց ճիշտ մի ամիս անցած, Արովեանը դիմում է Վրաստանի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոսին հետեւեալ խնդրագրով.

„Նշանադրեալ գլով ընդ գերմանուհի օրիորդին Լօզէ ա-նուն, ի վաղիւն կամիմ մտանել ընդ նմա ի կապ օրինաւոր սուրբ ամուսնութեան ըստ ծիսի Հայաստանեայց եկեղեցւոյ, ուստի մատուցանելով ընդ սմին զդաշն մեր և զվկայութիւն կառավարութեան ճեմարանին Տիփլիսայ, խոնարհաբար խնդրեմ՝ յետ գրաւոր հարցումն առնելոյ ընդ գերմանացի քահանային Ռօտ անուն ըստ պահանջելոյ օրինաց, հրամայել Տէր Մովսէս առագ քահանային Սայաթնեան՝ պսակել զմեզ ի Վանքի Մայր եկեղեցւոյ Հայոց: Վերատեսուչ նահանգական վարժարանին Տիփլիսայ խաչատուր Ապովեանց: 7 սեպտ. 1839“:

Նոյն օրը, սեպտեմբերի 7-ին, հոգևոր վարչութեան կողմից գրաւոր հարցումն է ուղարկւում գերմանացոց պատար Ռօտին և սա դարձեալ նոյն օրը պատասխանում է Կարապետ արքեպիսկոպոսին չաղազս ամուսնութեան գաւառական վարժարանի տեսուչ Արովեանի ընդ օրիորդին էմիլիայի Լօզէն, դստեր Ռէվէլի բնակիչ հանգուցեալ Խրիստիան Ֆրիդրիխ Լօզէնի, պատիւ ունիմ ծանուցանել, որ էմիլիա Լօզէն օրիորդը այժմ 20 տարեկան է, պատկանում է լուսեւրական դաւանութեան, սոյն սեպտեմբերի 3-ին արժանացած է սուրբ հաղորդութեան, երբէք ամուսնացած չէ եղած և ես իմ կողմից ոչինչ օրինաւոր արգելք չեմ գտնում վերոյիշեալ անձանց ամուսնանալուն և պսակուելուն հայոց եկեղեցւում: Պատեօր Յ. Ա. Ռօտ“:

Թուղթը ստացուելուց պաշտօնապէս մակագրուում է «յՅ-ն սեպտեմբերի 1839, համար 237 հրամանագրուեցաւ Մովսէս աւագ երեցու Սայաթնեան կատարեալ զխորհուրդ պսակի վերառելոցն»:

Աբովեաններին պսակը կատարուեցաւ նոյն սեպտեմբերին Վարազայ խաչի կիւրակէ երեկոյեան: Խաչեղբայրն էր ուսուցիչ Դարբիէլ երէցփոխեանցը, ուսա հայերէն յայտնի բառարան յօրինողը:

Հարսանիքի մասին բոլորովին յայտնի չէր ժողովրդին. յանկարծ այդ երեկոյին հասարակութիւնը լսում է զինուորական երաժշտական խմբի ձայնը Վանքի մայր եկեղեցու գաւթում: Ամեն կողմից թափուում են հանդիսատես լինելու, որովհետեւ առաջին անգամն են պատահում, որ Թիֆլիզում մէկը զինուորական երաժշտական խմբով հարսանիք էր անում: Մեծ հանդէս է կատարուում թէ եկեղեցում և թէ տանը. ներկայ են լինում ժամանակի բոլոր յայտնի մարդիկ իրանց ընտանիքներով: (Տեսնողները պատմել են պ. Վարդանին):

Գերմանուհի կին ունենալով, նա չմոռացաւ իւր իսկական կոչումը, պարտականութիւնը. այլ գործին աւելի խիստ կպաւ: Նրա եռանդը նկատուեց, ուստի 40 թ. Փետրուարի 26-ին նրան յանձնեցին և ֆրանսերէնի դասեր:

Սոյն թուականին Աբովեանը ցանկացաւ աւելի բարձր կեդրոնում սուղ ունենալ, առիթն ինքն իրեն եկել էր, Վազանի համալսարանի հայոց լեզուի ամբիոնը բաց էր. ուստի 3 շաբադրութիւն ներկայացրեց (հայերէն, ռուսերէն և գերմաներէն—ա. ձեռնարկ սկզբնական դասաւանդութեան ըստ նորագոյն մանկավարժութեան մեթօդայի. բ. ռուսերէն տէօրէտիքական և պրակտիքական քերականութիւն հայերի համար ըստ ձեռնարկի Տապալի և գ. գերմաներէն): Խոստանում է նոյնպէս շաբադրութիւններ ուղարկել, որոնք պատրաստ էին, սակայն չէին արտագրուած (օրինակ պրակտիքական քերականութիւն հայոց, համառօտութիւն ամենայն զիտութեանց):

Վերոյիշեալ աշխատութիւններն ուղարկում է Լուսաւորութեան մինիստրին և մինչոյն ժամանակ խնդրում է տպագրել տալ կայսերական հաշուով: Նախարարն անմիջապէս ուղարկում է գիտութեանց ակադեմիայի խորհրդին, որը և յանձնում է քննելու էքստրօրդիներ Բրոսէին:

Գննութիւնից երևում է, որ միայն քերականութիւնը կարող է պէտք գալ Անդրկովկասի ուսումնարաններում: Բայց տպագրութեան ծախքի համար աղբիւր չեն գտնում: Ակադեմիայի խորհուրդը առաջարկում է Աբովեանին օգտուել Ակադեմիկ Բրոսէի ծանօթութիւններէր:

Թէ լուսաւորութեան նախարարի դեպարտամենտը և թէ ակադեմիայի խորհուրդը ոչ մէկը շաբադրութիւններէց բաւականացուցիչ չհամարեց. ուստի և Աբովեանն ոչ միայն չստացաւ

համալսարանի ամբիոնն, այլ և շարժանացաւ տպագրուած տես-
նել նոյն իսկ պէտք եկող քերականութիւնը:

Այս տեսակ խոչնդոտներն անկարող եղան թուլացնել նրա
եռանդը. ուսումնարանական գործի հետ միասին նա շարունա-
կեց իր սակաւ ազատ ժամերը նուիրել գրականութեան, որի
արդիւնքը կարճ ժամանակում եղաւ հետեւեալ նոր աշխատու-
թիւնները.

ա. Կարճ ձեռնարկ հայոց լեզուի ուսուցման համար:

բ. Փոքրիկ առակներ:

գ. Աղօթքներ ոտանաւորով:

դ. Բանի մի ուրիշ ոտանաւորներ ժողովրդական բարբա-
ռով երեխաներին դրողեցնելու համար:

ե. Ողբ Աղա Մահմադ Խանի Թիֆլիզ քանդելու համար:

զ. ձառեր Թիֆլիզի հայոց գերեզմանատան մասին:

է. ձառ Էջմիածնի մասին:

թ. Զանազան բարոյական առակներ և երգեր:

Ցանկանալով իւր այս վերջին աշխատութիւններն ընդու-
նել տալ Կովկասի դպրոցներում, 41 թ. առաջարկեց Թիֆլիզի
գիմնազիայի մանկավարժական խորհրդին, յայտնելով թէ կա-
մենում է տպագրուած տեսնել արքունի հաշուով:

42 թ. ժողովը զանազան մարդկանց քննադատութիւնից
յետոյ յայտնում է—որ Արուիեանը չինել է իւր տանու աշակերտ-
ների համար, ընդ սմին Սրեանու ժողովրդական բարբառով լի-
նելով խառն է դրացի ուրիշ լեզուների հետ, այդ պատճառով
զուրկ է գրաբար լեզուի բոլոր արժանաւորութիւններից և կա-
նոններից: Ընդհանրապէս զրուած են շատ ցամաք և անկապ.
Ժողովը դա կան երգերը և հանաքները անճոռնաց-
նում են այդ շարագրութիւնը: Ողբը և ճառը բոլորովին ան-
պէտք են ընթերցանութեան համար: Ամբողջ գրքի մէջ հեղինա-
կը թոյլ է առել իրեն գործածել ժողովրդական անտեղի բա-
ռեր ուրիշ լեզուներից առած: Այս ժողովն Արաբատովի ասած-
ներն ի նկատի առնելով եկաւ այն համոզման, որ այդ գիրքը
պիտանի չէ Կովկասի հայոց ուսումնարանների համար, նախ
այն պատճառով, որ լեզուն ժողովրդական է և տալիս էն ոչ մի
քերականական կանոնների չի ենթարկուած. գիրքը խառն դա-
տողութեանց պտուղ է և վերջապէս շատ սխալներ կան որպէս
լեզուի, նոյնպէս և ճաշակի ճշտութեան կողմից. իսկ Թիֆլիզի
գիմնազիայի աւագ ուսուցիչ Արզանօվը կարծում է, եթէ Ա-
րուիեանը չի դժուարանալ ուղղել գրքի մէջ նկատուած քանի
մի պակասութիւնները, այն ժամանակ այդ գիրքը կարող է լի-
նել ամենալաւ ձեռնարկը հայերէն գրել կարգալ սովորեցնելու
համար: Նրա գործածութիւնն օգտաւէտ կը լինի գաւառական
դպրոցների Ա. և Բ. դասարանների համար: Հաղորդելով այդ
մասին Ձեզ, պատիւ ունիմ յայտնել, որ Արուիեանի այս գիրքը
չինելը արտայայտում է նրա մէջ գովելի հետաքրքրութիւն, որ

իրեն փորձ արժանի է խրախուսման, թէև այսպիսի նորամուծութիւնները շատ անգամ չեն յաջողում մինչև անգամ ամենատաղանդաւոր յեղափոխողներին իրենց մայրենի լեզուին. այսուամենայնիւ եթէ այդ գիրքը բաց կը թողնուի ցենզուրայից, այն ժամանակ Արովեանը կարող է տպել այդ հետաքրքրուողներին համար, բայց որովհետև աշխատանքը շինուած է ոչ պարզ հայերէնով այլ Սրեանի, որ ունի օտարազգի բառեր, չունի որոշ ձևեր, քերականական կանոններ և գուրկ է գրական արժանաւորութիւններէր— ուղղագրութիւնից, ուստի չի կարող ընդունուիլ իրեն ձեռնարկ մեր ուսումնարաններում, ուր մենք պիտի պահպանենք լեզուի ուսումնասիրութիւնը նրա մաքրութեամբ, որոշ քերականական կանոններով, որ մշակած է գիտութիւնը և հաստատած է գրականութիւնը Այնպիսի մի լեզուի դաստաւանդութիւնը, որպիսին է Հայոցը, պէտք է որ թէ գիտութեան և թէ երկրորդաբարութեան բարոյականութեան զարգացման համար այնպէս լինի, որ այդ երկրորդութիւնը տեսնէ ամեն բանի մէջ ճշտութիւն կանոնների և ոչ թէ խառնըփոխ կանոններ, որոնց գոյութիւնը իւր գրքի մէջ Արովեանը ինքն էլ չի հերքել: Իսկ նորա ընտրած Սրեանի բարբառը կարող է ներմուծուել դասարանները սովորելու համար երբ այդ բարբառը որոշ ձևեր կը ստանայ. սակայն այդպիսի գործը մի մարդու ոյժից բարձր է, միայն ժամանակը կարող է կատարել: Գրականական շարադրութիւնը հիմնուած պիտի լինին ժողովրդի հոգու և զարգացման վերայ:

Կուսակալը ստանալով վերոյիշեալ գրութիւնը շարադրութիւնների հետ միասին գրում է, որ համաձայն է մանկավարժական ժողովի վճռի հետ, հրամայում է յայտնել Արովեանին սոյն վճիռը և վերադարձնել ձեռագիրները ¹⁾:

42 թ. կառավարիչ սենատն առանց ի նկատի առնելու վերոյիշեալ մերժումը, յարգեց նրան, գնահատեց Արովեանի բարձր արժանաւորութիւնն և տիտուլեարնի սովետնիկութեան ապտիճան տուեց:

Այս թուականին Արովեանի սիրար լցում է մի անհուն վշտով: Նա կորցնում է իւր անգին բարերար Բարբոտին: Ո՛րքան ցաւ էր Արովեանի սրտի համար. մեծ տխրութիւն էր զգայուն մարդու համար կորցնել մի անձնաւորութիւն, որ այնչափ սիրով սիրել և փայփայել էր, որ հարազատ որդու նման նրան գգուել է... Ձգացուած սրտով նա միշտ նորա անման պատկերին էր նայում և իւր ներքին թախիժը, սրտամորմոք կսկիծներն արտայայտում:

Մանր գրեցէ ինձ գթածն Ստեղծող
Ձգեզ ճանաչել ինձ երկրորդ կենսատուող

¹⁾ «АБТ»-ից պ. Աղէքսանդր Սրեանը իմ խնդրիս համաձայն այս երեսը թարգմանաբար կարդաց ինձ համար:

Ոչ ֆեռ ծանեայ զնա ինձ հայր խնամակալ,
 Իմ հայր բազմերախտ՝ յաւիտեան օրհնեալ:
 Ոչ քո շունչ մաքուր, իբրեւ արարչական
 Այն ինչ յանդնդոց հանէր կուրութեան
 Ձիս ի տես, ի զմայլ սքանչելեաց նորա,
 Վառէր զիս ի սէր, սուրբ յերկիւղ առ նա...
 Անդ տապան Նոյի, անդ խաչ Քո անզօր
 Տօնեցին զիւրեանց դարուց անցք հոգօր:

(Յիշատ. Ղօրդ.)

Ամեն կողմից տխրութիւն, ամեն կողմից վիշտ. հէնց այն
 ժամանակից, երբ նա ասպարէզ մտաւ ոգևորուած իւր ազգի
 ապագայով, երբ նա իւր աշակերտներն սրտերում վառում էր
 աստուածային կայծը, հայրենասիրութեան հոգին: Նա սգում
 էր իր վիճակը, սգում էր իւր հայրենի երկրի կորուստն... ու
 կոպիտ դրութիւնը, ցաւում էր իւր նեղ շրջապատը, ազիտու-
 թեան խաւարը և միշտ իրեն զօրկ համարում հոգեկան վա-
 յելութիւններէն, ուրախ ընդունելից:

Նւ ինձ վերջին խուղ մնաց այս անկիւն

Ուր սգամ զաւուրց իմոց դառնութիւն¹:

Նւ յերաւի վաղուց էր նա խեղատեւ իւր հերոսական ցա-
 ւեշով և արգէն սկսել էր թափել իւր սրտում կուտակուած
 դարդերը իւր «խուղ» մէջ «Վէրք Հայաստանի» դառնալից
 էջերի միջոցով:

«Եսպէս բաները մտածելով օրս ու ումբս մայիլել էր:
 Շատ անգամ ուզում էի իմ գլուխս մահու տամ: Ձէի իմանում թէ
 սրա շարէն ինչ կրլի: Թող լսողը չհաւատայ, ամա էս ցաւն էն.
 պէս էր սիրտս առել, որ շատ անգամ գծվածի պէս ընկնում
 էի սար ու ձոր, մանգալիս մտածում, էլ ետ լիքը սիրտս տուն դա-
 լիս: Հէնց էս էր պատճառը՝ որ մէկ օր էլ ամառական դաստու-
 րի ժամանակին՝ աշակերտներս՝ որ առաւօտը թողի, ճաշիցը եդ
 ընկայ էլի սարէսար, ճարս կտրվեց զնացի նեմեցի կոյոնիէն՝
 մէկ նեմեց բարեկամի մօտ, նրանք էլ ինձ վրայ ցաւելով երեք
 օր չթողին, դամ քաղաքը: Բայց քաղաքումն, իմ սիրելի աշա-
 կերտները, ու ծանօթ, բարեկամք՝ իմ սուրբս վաղուց էին ա-
 րել: Հէնց իմացել էին թէ Քուռն եմ ընկել, չունքի ամեն ա-
 ռաւօտ, ըրգուն գնում էի, լողանում¹): Ել իմ, իմ աղիզ, իմ
 սիրելի աշակերտներն էին ընկել ետեիցս որ բալքի մէկ բան
 էլայ իմանան: Մէկ առաւօտ փանջարումը նստած՝ էլի մտքիս
 հետ էի ընկել, որ նրանք առաջովս անցկացան: Որ չտեսայ
 նրանց, հոգիս տեղընան էլաւ: Իմ ու նրանց էս օրվան իրար

¹) Այս է պատճառ որ ամուսինը լողանալու զնալուց հե-
 տուում է նրան, թէ մի գուցէ մտածող մարդ է դարդերից իրեն
 ձգէ ջուրը: Այս բացատրւում է նրանով, իբրեւ թէ գերմանու-
 հին կասկածում էր նրա վրայ....:

տեսնելը՝ ո՞վ կարայ պատմել, ո՞վ սիրտ ունի, ինքը կիմանայ: Բալթի թէ գերեզմանումը էս ձեր սէրը մտքիցս գնայ՝ այ իմ սիրելի, իմ ազիզ բարեկամը, թէ չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերանումս, ձեզ, ձեզ սուրբ պէտք է համարեմ ինձ համար, ձեր արեւին մեռնիմ» (Վ. Հ.):

Միակ միութարուծիւնը իւր սիրելի աշակերտներն էին, որոնց բացի վէպի մէջ յիշելուց՝ իւր ոտանաւորներում անգամ դրուատում էր:

Ծանր վշտերի փոխարէն նա ունէր իւր շուրջը մի խումբ սիրասուն բարեկամներ, որոնք պատրաստ էին իրենց անգին սուտուցի ի համար ամեն ինչ չխնայել: Արուիւնն ուրախ էր դժբանց գեղեցիկ յառաջագիմութեամբ թէև երբեմն երբեմն իւր դառնութիւնները յայտնում էր դէպի դրանց «հախ-վերմազ» ծնողները:

Գիշերները գրաւոր պարապմունքները՝ Վ. Հ. էջերը, ցերեկներն իւր սիրելի աշակերտները: Ահա այն գրադմունքներն, որոնցով անց էր կացնում իւր ժամանակը, և ամենայն բարեխղճութեամբ ծառայում իւր կոչման. սակայն նրա անուան— նրա պատուին խեթ աչքով սկսեցին մտիկ տալ. բարեկամական կտպերը տեղի տուին թշնամական յարաբերութիւնների, սիրոյն տեղի տուեց կոյր նախանձ «Աստի և նախանձ» չարակամութիւն իմոցս պաշտօնակցաց զրկեալ զիս բուն յորդեգրաց իմոց պատճառ եղեն ինձ թողուլ զՏիփիս և հեռանալ» (Փորձ Ը. և Թ.):

Թողնել իւր սիրած ու փայփայած աշակերտներին, ընդ միշտ մնառ բարեաւ ասել իւր քաղցրիկ գաւակներին—այս միտքը—ցնցում է Արուիւնին, նա զգացում է. Թողնել մի բաղադ, որտեղ երկար ժամանակ սերունդ է կրթել, հեռանալ մի դպրոցից, որտեղ տասնեակներով հոգեսուն աշակերտներ ունէր—այս մտքերը անհետևանք չեն մնում նրա սրտի մէջ—նա իւր հոգեբուզի խօսքերով մէկին է դիմում. «Առ պատուական իմ բարեկամ և աշակերտ հոգեսուն շնորհազարդ պատանի Սգօր Ալիմեան ի 1844-ի 28 ապրիլի».

Հողէ իմ մարմին, թէ չէ քեզ նման,
Քո հոգի տայ նմա շունչ կենդանութեան,
Յանխիղճ օրհասէն զրկիմ արդ՝—ի քէն,
Շունչ և զօրութիւն վերանան յինէն:
Առանց քեզ իմ կեանք տաւտարոս դժնդակ,
Ինձ բոլոր աշխարհ դժոխք չհենսափակ,
Որքան հեռանամ, այնքան զօրանայ
Բուռն քարշողական զօրութիւն նորա (Յիշատ. Ղօրդ.)

Թողնելով Թիֆլիզը զրկում է շունչ և զօրութիւնից, «գըծնդակ տարտարոսի» մէջ է գլորում: Սակայն չի բաւականանում այս խօսքերով, նա կրկին շարունակում է արտայայտել իւր սիրտն ու հոգին:

Փակեցան յաչացս լերինք Տիխիտոյ
 Փակեցաւ սիրտս ի քաղցր յուսոյ,
 Զքեզ տեսանել, գքեզ գեղգեղել,
 Ի քո գիրկս հանգչել, գքեզ զմայել,
 Սայլ իմ առաջէր, սիրտ իմ հառաչէր,
 Նրիվարք սլանան, ծունկք իմ թուլանան,
 Սէր քո զիմ հոգի, զմարմինս դառնաղի
 Յալիս թախծութեան ձգեն երկկուսի:
 Յարեան արտասուք ծովացեալ ցաւօք,
 Ի յամսս վայոց մթազնեալ մտօք—
 Գնամ և նայեմ, յետս ախ հայլիմ,
 Ողբալով՝ ի ծունր եղեալ՝ պաղատիմ,
 Կաց բարեաւ՝ հոգւոյս անդին սիրեկան
 Քեզ աջ բարձրելոյն լիցի պահապան
 Թէ ոչ այլ ևս ինձ տես քո մասն լիցի,
 Ինձ և դուքն խորին ի դրախտ դարձցի,
 Թէ աջ քո զիմ աչս փակեցցէ վերջին,
 Թէ ձեռն քո ինձ զըռուռն տայ հողոյ յետին (Նոյնտեղ):

Աւ ինչո՞ւ այսպիսի հառաչ ու թառաչ, ինչո՞ւ մթազնուած մտքեր են պատուած, քանի որ սէրն ու մտերմութիւնը իւր պա-
 թոսին են հասել. երկու կողմերը ջերմ համակրութեան վերջին
 աստիճանին են հասել: Շնորա քաղցր վարմունքի և ջերմ ազ-
 դասիրութեան համար խօսուած են թիֆլիզում ունեցած իւր
 մասնաւոր դպրոցի աշակերտները, մի (հայագէտ) վրացի գըն-
 դապետ Բագրատէէ շատ քաղցր յիշողութիւններ է պահել
 Աբովեանին աշակերտած ժամանակից. նրա ասութեամբ աշա-
 կերտներ չեն եղել իրենք, այլ սիրելի դաւակներ, լաւ օրերին
 ճաշերից յետոյ միշտ տանում է եղել դաշտ զբօսանքի. Բագ-
 րատէէն չի մոռանում այն գրկախառնութիւնը, որ ունեցել են
 բոլոր աշակերտներն իրանց սիրելի ուսուցչի հետ՝ թիֆլիզից
 Նրեան պաշտօնով հրաժեշտ տալու օրը, բոլոր աշակերտները
 միքանի վերստ ուղի են դրել Աբովեանին» (պ. Պ. Պոռչ. նամակից):

Զգուած նախանձոտ պաշտօնակիցներից, սակայն վրդո-
 վուած իւր սիրելի աշակերտներից բաժանուելով 1844 թ. ապ-
 րիլի 27-ին թողնում է թիֆլիզը «կիսատ-թերատ թողնելով և
 իւր գիշերօթիկ վարժարանի գործը, որ բացած ունէր թիֆլի-
 զում իւր մօտ առանձին» (Փորձ):

Ներսէս Տէր-Վարապետեանց:

(Վերջը հետևեալ գրքում):